

## ՀՀ ԳԱԱ նախագահին ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակությանը

Ս/թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) պատվիրակությանը:

Պատվիրակության կազմում էին ԻԻՀ «Սաադի» հիմնադրամի նախագահ, Պարսից լեզվի և գրականության ակադեմիայի նախագահ Ղուլամ Ալի Ջադդար Ադեբ, ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Սեհոյի Սոքհանին, «Սաադի» հիմնադրամի միջազգային կապերի հարցերով փոխնախագահ Սեյեդ Ալի Մուսավի Ջադեհ, ԻԻՀ արտաքին գործերի նախարարության պարսից լեզվի զարգացման համակարգման վարչության պետ Սեհոյի Քարիմին, ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության մշակույթի հարցերով խորհրդական Մոհամմադ Ասադի Մովահեդը, ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության հանրային դիվանագիտության հարցերով կցորդ Նեդա Ռաեֆիպուրը:

Ողջունելով հյուրերին՝ ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանը ասաց. «Մեծ պատիվ է ընդունել Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակությանը հայոց գիտության տաճարում: Իրանը մեզ համար բարեկամ եր-



կիր է: Ես բարձր եմ գնահատում գիտության տարբեր ուղղություններով Իրանի Իսլամական Հանրապետության հետ համագործակցությունը: Մենք քննարկում ենք ունեցել պարոն դեսպանի հետ և համոզված ենք, որ պետք է ակտիվացնել փոխհարաբերությունները»:

«Սաադի» հիմնադրամի նախագահ, Պարսից լեզվի և գրականության ակադեմիայի նախագահ Ղուլամ Ալի

Ջադդար Ադեբը նշեց. «Իրանի Իսլամական Հանրապետության գիտական կառույցների և գիտությունների ազգային ակադեմիայի միջև համագործակցության բազմաթիվ ոլորտներ կան: Ամենակարևոր գործոնը, որն իսկապես առաջացնում է համագործակցելու ձգտում, երկու երկրների միջև լավ հարաբերություններն են: Առհասարակ պատմությունից բխող մեր հարաբերությունները հայ ժողովրդի հետ միշտ շատ լավ են եղել: Հայ համայնքը ոչ միայն սիրված է Իրանի ժողովրդի կողմից, այլև ունի գիտնականներ, որոնց ներկայությունը հարգանքի առիթ է ստեղծում»:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին գիտության ոլորտում համագործակցության հեռանկարները: Այնուհետև ԻԻՀ պատվիրակությունը այցելեց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, որտեղ ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գոհար Իսկանդարյանի հետ քննարկվեցին համագործակցության ուղիները:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## «Տարածաշրջանային փոխակերպումները և Հայաստանը. անվտանգային տեղաշարժեր» միջազգային գիտաժողովը



Ս/թ. նոյեմբերի 28-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Տարածաշրջանային փոխակերպումները և Հայաստանը. անվտանգային տեղաշարժեր» միջազգային գիտաժողովը: Նպատակն էր քննարկել արդի փուլում կերպարափոխվող տարածաշրջանում Հայաստանի Հանրապետության առաջ ծառացած մարտահրավերները: Գիտաժողովին մասնակցեցին դիվանագիտական, գիտական, կրթական, պաշտպանական կառույցների ներկայացուցիչներ:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը: «Մարդկությունը աշխարհաքաղաքական լուրջ փոփոխությունների ընթացքում է, և այս պայմաններում յուրաքանչյուր երկիր պետք է մտահոգվի իր անվտանգային խնդիրներով: Այս առումով Հայաստանի համար չափազանց լուրջ մարտահրավերներ կան, որոնց հաղթահարման ուղիները կարող են բացահայտվել գիտական մշակումների ճանապարհով», - ասաց Յուրի Սուվարյանը:

Ակադեմիկոս Սուվարյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետությունը կարող է ապահովել իր անվտանգային միջավայրը մասամբ սեփական արտադրությամբ զինված բանակով, տեխնոլոգիապես զարգացած արդյունաբերությամբ և ճկուն դիվանագիտությամբ: «Սա ենթադրում է ունենալ հզոր գիտություն: Գիտությունն է երկրի անվտանգության զարգացման գլխավոր գործոնը: Նմանատիպ գիտաժողովները պետք է նվիրվեն այնպիսի խնդիրների, որոնց գործնական լուծումը կպայմանավորի մեր երկրի հզորությունը և դիրքը համաշխարհային քաղաքականության մեջ», - նշեց Յուրի Սուվարյանը:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գոհար Իսկանդարյանը նշեց. «Ակնհայտ է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո առկա տարածաշրջանային խնդիրները ոչ միայն լուծում չստացան, այլև առիթ հանդիսացան տարբեր աշխարհաքաղաքական բեռների համար մրցակցության, դիրքավորման, խնդիրների նորոգի լուծման համար: Յուրաքանչյուր քաղաքական բեռն այդ խնդիրներին նայելու է զուտ իր շահերի դիտանկյունից, և հաճախ դրանք չեն համընկ-

նելու հայկական շահերին: Գիտաժողովի նպատակն է վեր հանել այդ բեռների շահերը, փորձել հասկանալ, թե որ հատվածներում կարող են դրանք համընկնել ՀՀ կենսական շահերին»:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի ավագ գիտաշխատող Գրիգոր Վարդանյանը նշեց. «Անվտանգային տեղաշարժերը Հարավային Կովկասում վերաճակավորվում են Պարսից ծոցը Սև ծովին միացնելու համար Հյուսիս-Հարավ միջանցքի և Կենտրոնական Ասիան Արևմուտքին կապող Միջին միջանցքի մեզաժրագրերի իրագործման համատեքստում»:

ՀՀ-ում Սիրիայի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Նորա Արիսյանը նշեց. «Ալեքսիս են Հայաստանի ջանքերը Միջին Արևելքի և արաբական երկրների հետ հարաբերություններն ամրապնդելու ուղղությամբ: Սա նշանակում է, որ Հայաստանը գործ ունի ոչ միայն մի քանի երկրների, այլև նաև Արևելքի հետ: Արևելագետների ջանքերով է նաև, որ այս հարաբերություններն ուսումնասիրվում են, մշակվում և ամրապնդվում»:

Թունիսի Հանրապետությունում և Մարոկկոյի Թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փուլադյանը գիտաժողովին ուղերձ էր հղել. «Արցախյան պատերազմից հետո Հարավային Կովկասում փոխվեց ուժային հավասարակշռությունը: Նշված խնդիրների վերաբերյալ քննարկումները և գիտական համայնքի կողմից բարձրացված հարցերը կարող են ոչ միայն օգտակար լինել մասնագիտական ակտիվ քննարկումների ծավալման, այլև ՀՀ դիվանագիտության համար: Այս տեսանկյունից գիտության և դիվանագիտության կապն ու համագործակցությունը կարող են ծառայել հոգևոր մեր պետության ազգային շահերին»:

Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռուբեն Մեթոնյանը կարևորեց Հայաստանում իրականացվող արևելագիտական հետազոտությունները:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը իր զեկուցման ժամանակ շեշտեց. «Հարավային Կովկասը դառնում է թատերաբեմ աշխարհի տարբեր ուժերի կենտրոնների միջև, և այդ պայթյալը միտում ունի դեպի սրացում»:

Գիտաժողովի ընթացքում զեկուցումներով հանդես եկան հետազոտողներ ԱՄՆ-ից, Եթովպիայից, Հայաստանից, Սիրիայից:

Գիտաժողովը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը՝ Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## Դադիվանքն ու «փաստի» հորինումը

Քարոզչական դաշտում հայկական մշակութային և կրոնական ժառանգության բռնադատումը Ադրբեջանի կողմից իրականացվում է մի քանի կեղծ թեզերից բաղկացած «մեթոդական ձեռնարկով»:

Եթե կա հայկական և հայատառ որևէ գրություն, ապա, ըստ ադրբեջանցիների, դրանք արվել են մեր շրջանում: Կախված ժամանակի քաղաքական իրավիճակից՝ այդ «ավելացումները» կատարվել են 19-րդ դարում, իսկ Արցախում, ինչպես իրենք են նշում, «օկուպացիայի տարիներին»: Այս հնարքն օգտագործվել է, օրինակ՝ Ամբերդի դեպքում: Ըստ ադրբեջանցի հետազոտողի՝ Վահրամաշեն եկեղեցու պատերի հայերեն գրություններն ավելացվել են 20-րդ դարի սկզբին: Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի «գիտնականների» կեղծ պնդումներով հայերեն «ավելացված» եկեղեցիների դեմ նյութական և հոգևոր հանցագործությունները՝ սկսել են 1836 թվականից, երբ «աղվանական եկեղեցին դարձել է թեմ ու ենթարկվել էքմիաժնի եկեղեցուն»:

«Հայերեն գրություններ ավելացնելու» կեղծ թեզը պարբերաբար կիրառվում է Դադիվանք վանական համալիրի նկատմամբ, որն ադրբեջանական վերահսկողության տակ է անցել 2020 թվականի նոյեմբերի վերջին:



Օրերս ադրբեջանական լրատվամիջոցներից մեկը կարճ հոդված է հրապարակել՝ «Ադրբեջանական խոշոր վանք Խուղավենգը ենթարկվել է հայկական կեղծարարությունների» վերնագրով: Ըստ այդ հրապարակման՝ 1993-2020 թվականներին հայերը փորձել են կեղծել վանքի պատմությունը՝ այն ներկայացնելով հայկական: Օրինակ՝ փոխարինվել են համալիրի խորհրդանիշերը, տեղադրվել այլ խաչեր, պատերին հին հայերեն գրություններ են ավելացվել, իսկ ուղի-աղվանների հին գերեզմաններն իբր ավերվել են:

Հիշեցնենք, որ դեռևս 2021 թվականին Ադրբեջանի ուղիական համայնքի ներկայացուցիչները Դադիվանքում պատարագ էին մատուցում: Այդ նպատակով Բաքուն օգտագործում է աղվանա-ուղիական կրոնական համայնքի ղեկավար Ռոբերտ Մոբիլիին, որը հանրայնացնում է ադրբեջանական թեզերը: Հավելենք, որ 2024 թվականին Վատիկանի պաշտոնաթերթում հոդված էր հրապարակվել, որտեղ Դադիվանքն ու Գանձասարը ներկայացվել էին որպես աղվանական՝ չունենալով որևէ փաստական հիմք:

Պատմության և առհասարակ տեղեկությունների կեղծիքն Ադրբեջանի իրականացնում է բազմաթիվ մեթոդներով՝ ստույգ տվյալները թաքցնելով, տեղեկություններն ու աղբյուրները ձևափոխելով, պատմական փաստերը ժխտելով, մոլորեցնող մեկնաբանություններով և այլն:

Ժխտողականությունն ու գոյություն չունեցող փաստերի հորինումն Ադրբեջանի հակահայկական քարոզչության հիմնասյուներից երկուսն են: Դադիվանքի օրինակով այստեղ հորինված փաստն այն է, թե իբր հայերը հայերեն գրություններն ավելացրել են՝ վանքը հայկականացնելու նպատակով:

**ՀՀ ԳԱԱ «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ**

## Գիտական աշխատությունը հերքում է հայերի ծագման մասին միջերը

Ս/թ. նոյեմբերի 29-ին՝ ՀՀ ԳԱԱ կենսաբանական գիտությունների և կենսաազդանության պրոբլեմային խորհրդի նիստի ժամանակ, տեղի ունեցավ «Ամբողջական գենոմի առաջին հետազոտությունը հայկական պոպուլյացիայում» (Demographic history and genetic variation of the Armenian population) գիտական աշխատության շնորհանդեսը:

Այս կարևոր աշխատությունը հրապարակված է «The American Journal of Human Genetics» ամսագրում: Այն համահեղինակել են գիտնականներ Հայաստանից, Անգլիայից, Իռլանդիայից, Եստոնիայից, Դանիայից, ԱՄՆ-ից, Հարավային Կորեայից:

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը նշեց. «Այս հետազոտությունը ճանապարհ է դեպի պատմական Հայաստանի գենետիկական ատլասի ստեղծումը և «Հայկական գենոմ» ծրագրի իրականացումը»:

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի լաբորատորիայի վարիչ և հոդվածի համահեղինակ պրոֆեսոր Լևոն Եպիսկոպոսյանը նշեց, որ աշխատությունը հերքել է պատմաբանների և լեզվաբանների դարձող շարունակ արմատացած այն տեսակետը, որ հայերի նախնիները Բալկաններից եկած փոյուզիական վերաբնակներ են: Հետազոտությունը չի հայտնաբերել էական գենետիկական ցեղակցություն հայերի և Բալկանյան տարածաշրջանի բնակչության միջև:



Գիտնականների միջազգային խմբի եզրակացությունը հիմնված է Հայկական լեռնաշխարհի և Բալկանների ինչպես ժամանակակից, այնպես էլ հնագույն բնակիչների գենոմների մանրամասն համեմատության վրա:

«Դարերի ընթացքում պատմական տվյալները ձևավորել են անցյալի մասին մեր պատկերացումը՝ ստիպելով ընդունել դրանք որպես ճշմարտություն: Այսօր ամբողջական գենոմի ընթերցման և տարբեր դարաշրջանների հնագույն ԴՆԹ-ի հետազոտության տեխնոլոգիաների շնորհիվ հնարավորություն ենք ստացել ստուգելու և վերանայելու հին շրջանի պատմիչների հաճախ ոչ հավաստի տեղեկությունները, վերականգնելու մարդկային պոպուլյացիաների ծագման ավելի մանրամասն ու գիտականորեն հիմնավորված պատկերը», - ասաց պրոֆեսոր Եպիսկոպոսյանը:

Հերքվել է հայերի ծագման հետ կապված մեկ այլ միջ, որը վերաբերում է սասունցիների ասորական արմատների մասին պնդումներին: Սասունի բնակիչների ասորի նախնիների մասին հիշատակումներ կան մի շարք պատմական աղբյուրներում՝ ներառյալ Աստվածաշնչում և սեպագիր տեքստերում, ինչպես նաև Ժողովրդական ավանդազրույցներում: Մինչդեռ հետազոտության արդյունքները բացառում են սասունցիների ասորական ծագումը, ինչպես նաև ցույց են տալիս, որ այս բարձրլեռնային շրջանի բնակչությունը, ի տարբերություն հայերի այլ աշխարհագրական խմբերի, ոչ վաղ անցյալում զգալի կրճատվել է:

«Հայկական լեռնաշխարհի բնակչության գենետիկական շարունակականության վերականգնումը հայտնաբերել է, որ հայերի գենոմի միջին մասը նկատելաբար նման է հայերի գենոմին, որը հայտնաբերվել է հայերի գենոմի միջին մասում»:

ազդեցություն են ունեցել Լևոնի մեծ լիթան երկրագործները: Մեզ հաջողվել է պարզել, որ վաղ բրոնզի դարից հետո Մերձավոր Արևելքում տեղի է ունեցել մարդկային զանգվածների զգալի տեղաշարժ: Որտեղի՞ց և ե՞րբ է դա տեղի ունեցել, ի՞նչն է դարձել նման լայնածավալ միգրացիոն ալիքի պատճառ. սրանք հարցեր են, որոնք թերևս կարիք ունեն պարզաբանման», - ասաց Լևոն Եպիսկոպոսյանը:

Նա հույս հայտնեց, որ գիտական մոր փաստերը կամրագրվեն դասագրքերում: «Մենք պետք է պայքարենք, որ այս գիտական ամուր հիմք ունեցող արդյունքը մտնի դասագրքեր, քանի որ այն հստակ և հիմնավոր է»:

Քննարկման ժամանակ նշվեց, որ հետազոտությունը կարևոր նյութ է ոչ միայն գիտության, այլ նաև արտաքին քաղաքականության համար:

Հետազոտությունը ֆինանսավորվել է ՀՀ ԿԳՄՍՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի, Եվրոպական հետազոտական խորհրդի (ERC), Մարի Կյուրի անհատական կրթաթոշակի, ESF DoRa PROGRAMME-ի, «Փալուստ Գյուլբենկյան» և Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամների (FAST) կողմից:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## Կայացավ Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական 17-րդ նստաշրջանը



Ս/թ. դեկտեմբերի 18-19-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական 17-րդ նստաշրջանը, որը կազմակերպել էր ԳԱԱ արվեստի ինստիտուտը:

Նստաշրջանը նվիրված էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի՝ 1987-2003թթ. տնօրեն, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը: Նա շեշտեց Լևոն Հախվերդյանի մեծ վաստակը թատերագիտության, գրականագիտության, լեզվաբանության ոլորտներում: «Թեև նա ավելի շատ արվեստագետ էր, գրականագետ էր, բայց ժամանակի լավագույն լեզվաբանների հետ հավասար պայքարում էր մեր լեզվի անաղարտության համար, որ մեր լեզուն ունենա քերականական անթերի լուծումներ, այն հարստանա մոր ճշգրիտ տերմիններով: Նրա կատարած գործը և եռանդը պետք է ոգևորեն այսօրվա հետազոտողներին», - ասաց Յուրի Սուվարյանը:

Մասնակիցներին ողջունեց Լևոն Հախվերդյանի սան, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը: «Լևոն Հախվերդյանը մեծ տեղ էր հատկացնում երիտասարդներին, ճանապարհի հարթում նրանց համար: Նա գիտեր, որ մեր ապագան մեր երիտասարդներն են: Այսօրվա միջոցառումը նվիրված է Հախվերդյանի վաստակի արժևորմանը», - ասաց Աննա Ասատրյանը:

Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանջյանը պատմեց հուշեր Լևոն Հախվերդյանի մասին և նշեց. «Մեր սերունդը երջանիկ սերունդներից է, մենք առիթ ունեցանք չփվելու բազմաթիվ մեծերի հետ՝ մեծ դրամատուրգների,

մեծ թատերագետների հետ, մարդկանց հետ, ովքեր դեռ այն ժամանակ կենդանի դասականներ էին: Այդ շարքում էր նաև Լևոն Հախվերդյանը: Բացառիկ անձնավորություն էր: Հույս ունեմ, որ մեր ականավոր գործիչներին հիշելու գործընթացը շարունակական կլինի»:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատերագիտության բաժնի վարիչ Հենրիկ Հովհաննիսյանը Լևոն Հախվերդյանին նվիրված «Իր ժամանակի հայ թատրոնի մեկնաբանը» գեկուցման մեջ նշեց. «Երբ ասում ենք 100-ամյակ, հասկանում ենք պատմություն, բայց մենք խոսում ենք մի մարդու մասին, ով երեկ մեր ժամանակակիցն էր: Երբ մարդը չկա, նրա հետ երկխոսությունը շարունակվում է: Իմ երկխոսությունը Լևոն Հախվերդյանի հետ շարունակվում է»:

Ակադեմիկոս Լ. Հախվերդյանի գործունեությանը և գիտական վաստակին իրենց գեկուցումներում անդրադարձան բանասիրական գիտությունների դոկտորներ Սուսաննա Հովհաննիսյանը, Լիլիթ Արզումանյանը, արվեստագիտության թեկնածուներ Գոռ Վանյանը, Անահիտ Զթյանը, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը:

Նստաշրջանի ընթացքում շուրջ քսան գիտական ուշագրավ գեկուցումներով հանդես եկան երիտասարդ հետազոտողներ Հայաստանից և արտերկրից:

Նստաշրջանի ընթացքում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող Գայանե Պողոսյանի «Պատկերագրական առանձնահատկությունները Վանի թագավորության կերպարվեստում» գրքի շնորհանդեսը:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## Գիտաշխատողները հայտնաբերել են գիտության և Հայաստանի ֆաունայի համար նոր տեսակներ

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտաշխատողները հայտնաբերել են գիտության և Հայաստանի ֆաունայի համար նոր տեսակներ և ապրելավայրեր:

Փորձարարական կենդանաբանության լաբորատորիայի աշխատակիցների հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել է սարդերի Eresidae ընտանիքին պատկանող գիտության համար նոր 1 տեսակ, գրանցվել է ՀՀ ֆաունայի համար սարդակերպերի նոր 50, վիճմերի 23 տեսակ: Երիտասարդ գիտաշխատող Անուշիկ Խաչատրյանի թեկնածուական թեզի կատարման շրջանակում հայտնաբերվել է ՀՀ ֆաունայի համար ջրարջերի 10 նոր տեսակ:

Արդյունքների վերաբերյալ տպագրվել են գիտական հոդվածներ մի շարք հայտնի միջազգային և ազգային գիտական հրատարակություններում՝ Springer Nature, Acta Agriculturae Slovenica (University of Ljubljana), Arab Journal Of Plant Protection, Euroasian Entomological Journal, Biodiversity, Indian Journal of Entomology:

Շիրակի մարզի Աշոցի տարածաշրջանում հայտնաբերվել են Դարևակու իժի նոր ապրելավայրեր: Աշխատանքներն իրականացվել են Սենտ-Լուիսի կենդանաբանական այգու գիտաշխատողների հետ համատեղ, գիտական ղեկավարն է կենսաբանական գիտությունների թեկնածու Լևոն Աղայանը: Տպագրվել է հոդված Herpetological Review ամսագրում:

Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում Հայաստանում առաջին անգամ ճագարների



օրգանիզմում հայտնաբերվել են դիկրոցելիա մակաբույծի ծվեր: Զվերն օվալաձև են, խիտ թաղանթով, լեղու հետ ընկնելով տիրոջ աղիներ՝ արտազատվում են արտաքին միջավայր: Մակաբույծի զարգացումը կատարվում է տիրափոխությամբ. միջանկյալ տերը *Helicella* և այլ ցեղի ցամաքային խխուլներն են, իսկ լրացուցիչ տերը՝ *Formica* ցեղի մրջյունները: Ճագարները և այլ վերջնական տերեր վարակվում են, երբ նրանք խոտի հետ ուտում են վարակված դիկրոցելիաների մետաբերկարիա պարունակող մրջյուններին: Վարակված ճագարների մոտ դիտվում են արտադրողականության նվազում, մարսողական համակարգի խանգարումներ և ընդհանուր հյուսվածություն: Գիտական ղեկավարն է կենսաբանական գիտությունների թեկնածու Մարինե Վարդանյանը: Տպագրվել է հոդված «International Journal of Agriculture and Biosciences»-ում:

Գիտության համար նոր տեսակների գրանցումը լույս է սփռում էվոլյուցիոն գործընթացների վրա՝ բացահայտելով, թե ինչպես են տեսակները հարմարվում իրենց միջավայրին և ժամանակի ընթացքում զարգանում: Նրանց բազմազանության ընթերցումն օգնում է պարզաբանել էկոհամակարգի դինամիկան և փոխկախվածությունները: Նոր տեսակների հայտնաբերումն ու մոնիթորինգը կարող են վաղ նախագուշացումներ տալ էկոհամակարգերի վիճակի և շրջակա միջավայրի փոփոխությունների մասին:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**



## ՄՏ-ՔԵՐԻ ՀԱՐԹԱԿ

## Ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի անդրադարձը տարածաշրջանային իրողություններին



● Տարածաշրջանի, ինչպես նաև Հայաստանի համար կարևոր է Մեղրիի երկաթգծի գործարկումը: Այն առաջնային նշանակություն ունի, պետք է ներդրումներ արվեն: Իսկ որ Հարավային Կովկասը ներկա փուլում համաշխարհային կառույցների համակարգերին միանալու ճանապարհի սկզբին է, ինձ համար ակնհայտ է:

● Ջանգեզուրի միջանցքը դիտարկվում է որպես Միջին միջանցքի 2-րդ ճանապարհ: Եթե այդ միջանցքը պետք է գործարկվի, ապա այն պետք է լինի Հայաստանի վերահսկողության ներքո:

● Հայ ժողովուրդը չի կարող Արարատից հրաժարվել: Այն մեր ինքնության կարևորագույն խորհրդանիշներից մեկն է: Առանձին հայտարարությունները ոչինչ չեն փոխում:

● Միսալ է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը հանել Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգից. որքան էլ մենք հիմա հասկանում ենք, որ Հայաստանը հիմա էքզիստենցիալ խնդիրներ է լուծում ու ճանաչման հարցը չի կարող առաջ մղել, բայց այդ հարցը պետք է պահել օրակարգում:

● Ինձ համար անընդունելի է Արևմտյան Հայաստանի ու «Արևմտյան Ադրբեջանի» միջև հավասարության նշան դնելը, որովհետև Արևմտյան Հայաստանը մեր բնօրրանն է: Անգամ միջնադարում Հայաստանը, կորցնելով իր պետականությունը, միևնույն է, մնում էր գործոն Մերձավոր Արևելքում Արևմտյան Հայաստանի շնորհիվ: Արևմտյան Հայաստանը հայաթափվեց Ցեղասպանության արդյունքում, ինչից հետո ստեղծվեց հայկական Սփյուռքը:

● Թուրքիայի և Ադրբեջանի միջև տեսլականների տարբերություն կա: Թուրքիայի համար որքան շուտ կնքվի Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության պայմանագիրը, իհարկե, Ադրբեջանի պայմաններով, այնքան լավ: Ինչո՞ւ... Ռուսիան 44-օրյա պատերազմից հետո մեր տարածաշրջանում իրադրությունը փոխվեց. Ռուսաստանը թուլացավ, թուրքերն ուժեղացան: Այդ պատճառով Թուր-

քիայի համար կարևոր է դա թղթով ամրագրել: Ադրբեջանի համար իրավիճակն այլ է. նրանք թույլ Հայաստանից առանց պայմանագրի ցանկանում են պոկել հնարավորինս շատ բան ու ճնշումն ուժեղացնել Հայաստանի վրա:

● Ռուս-թուրքական հարաբերությունները կարող են վատանալ, բայց պատերազմի մասին խոսելն անիմաստ է, որովհետև երկուսն էլ ունեն ընդհանուր շահեր ու կփորձեն ամեն ինչ անել՝ դրանից խուսափելու համար:

● Չմոռանա՞նք, որ ռուսական Գլխավոր շտաբի քարտեզներում Թուրքիան նշվում է որպես Ռուսաստանի հիմնական հակառակորդներից մեկը: Թուրքերին վստահել չի կարելի, սակայն նրանց հետ աշխատել պետք է:

● Ռուբեն Ռուբինյանի հանդիպումները թուրք պաշտոնյաների հետ ոչինչ չեն փոխում: Ոչ մի գործընթաց տեղի չի ունենում: Դրանք տեղի են ունենում ԱՄՆ-ի համար, որ տեսք է ինչ-որ բան անում ենք: Թուրքիան միանգամից չի գնա հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման, եթե անգամ ինչ-որ թուղթ ստորագրվի: Ինչ-որ բան կպահեն՝ Հայաստանի վրա ճնշում գործադրելու համար:

● Աշխարհում մի երկիր կա, որ ԱՄՆ-ից անվտանգության լիակատար երաշխիքներ է ստացել: Դա Իսրայելն է: Ուրիշ ոչ մի երկիր այդ ծավալի երաշխիք չի ստանում ու չի էլ ստանալու: Հայաստանը որևէ երաշխիք չի ստանալու ԱՄՆ-ից:

● Մեր անվտանգության երաշխավորը Ռուսաստանն է՝ իր բոլոր բարոյություններով: Սա չպետք է մոռանալ ու չպետք է սրել հարաբերությունները Ռուսաստանի հետ: Պետք է խուսափել Ռուսաստանի բացասական արձագանքից. իսկ դա կլինի, երբ ՀԱՊԿ-ից դուրս գանք: Իսկ ի՞նչ ենք մենք ստանալու դրա փոխարեն Արևմուտքից: Արևմուտքն ասում է՝ մի՛ շտապեք:

● 2018 թ. Հայաստանում տեղի ունեցածը՝ հեղափոխությունը, կարծում են, Ռուսաստանի թույլտվությամբ էր: Կային այդ շարժման մեջ ներգրավված պրոարևմտյան ուժեր, բայց եթե Ռուսաստանը դրան դեմ լիներ, այդ ամենը չէր լինի:

● Ամեն դեպքում մեր ժողովրդի պատմական հիշողությունը թույլ չի տա, որ մենք հայտնվենք վտանգի մեջ: Մենք մեր ինքնությունը պետք է լավ հասկանանք ու ավելի ուժեղացնենք: Մենք աշխարհին հետաքրքիր ենք մեր ինքնության վրա հիմնված արտաքին քաղաքականությամբ:

(168.am, 12.12.2024 թ.)

## Աշոտ Մելքոնյան. Արևմտյան Հայաստանն ու «Արևմտյան Ադրբեջանը» բացարձակապես համեմատելի չեն. Արևմտյան Հայաստանը մեր իրական պատմական հայրենիքն է...

Վերջերս Նիկոլ Փաշինյանը Հանրային հեռուստաընկերությանը տված իր հերթական հարցազրույցում զուգահեռներ տարավ Արևմտյան Հայաստանի և Բաքվի կողմից քարոզչական նպատակներով՝ պատմությունը խեղաթյուրելու և իր նվաճողական քաղաքականությունն արդարացնելու համար շրջանառվող «Արևմտյան Ադրբեջան» կեղծ եզրույթի միջև:

«Հիմա մենք նեղվում ենք և շատ ծանր ենք տանում, պրոբլեմ ենք համարում, որ ինչ-որ տեղ ինչ-որ մարդիկ օգտագործում են «Արևմտյան Ադրբեջան» տերմինը, չէ՞: Բա մենք որ ասում ենք՝ Արևմտյան Հայաստան, չէ՞նք մտածում, որ ինչ-որ մարդկանց դա գրգռում է: Ոնց որ ասում են՝ «Արևմտյան Ադրբեջան», և դա մեզ գրգռում է, այդպես էլ, երբ ասում ենք՝ Արևմտյան Հայաստան, ուրիշներին է գրգռում:

Հիմա էլի ասելու են՝ հերթական դավաճանությունը, ստոր տակաճությունը... Ես էսօր գտնվում եմ մի կարգավիճակում և մի պատասխանատվության մեջ, որ պարտավոր եմ մեր ժողովրդի հետ խոսել և ցույց տալ պատճառահետևանքային կապերը, շղթաները: Եթե ես դա չանեմ, նշանակում է՝ գիտակցաբար երկիրը տանում եմ դեպի պետականության կորուստ», - նշել է Նիկոլ Փաշինյանը:

Պատմության չիմացություն, թե՞ հանրությանը միտումնավոր մոլորեցնելու և ադրբեջանական քարոզչություն իրականացնելու նպատակ ունի Նիկոլ Փաշինյանի այս համեմատությունը:

ԳԱՍ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի խոսքով այս հարցը պետք է ուղղել այն մարդկանց, որոնք այս տերմինները դնում են շրջանառության մեջ:

«Սա գիտական խնդիր չէ, քաղաքական է, ուրեմն՝ դրա մեջ կա ենթատեքստ, բայց գիտական առումով սա որևէ բնության ենթակա չէ», - 168.am-ի հետ զրույցում նշեց Աշոտ Մելքոնյանը:

Պատմաբանի դիտարկմամբ «Արևմտյան Հայաստանը» հայության պատմական հայրենիքն է, իսկ «Արևմտյան Ադրբեջան» տերմինը Ադրբեջանի կողմից հորինված ու շրջանառության մեջ դրված կեղծ թեզ է:

«Արևմտյան Հայաստան» աշխարհագրական հասկացությունը շրջանառվում է 4-րդ դարից՝ 387 թվականի Հայաստանի առաջին բաժանումից սկսած: 395 թվականից՝ ստեղծվեց Բյուզանդական



կայսրությունը, որի տիրապետության տակ գտնվող հատվածը կոչվեց Արևմտյան Հայաստան:

Ինչ վերաբերում է «Արևմտյան Ադրբեջան» եզրույթին, ապա սա շինծու տերմին է, որը շրջանառության մեջ է մտել վերջին տասնամյակներին՝ Ադրբեջանի պետական ու քաղաքական շրջանակների կողմից: Այս երկուսը բացարձակապես համեմատելի չեն, քանի որ Արևմտյան Հայաստանը մեր պատմական հայրենիքի արևմտյան հատվածն է, որտեղ ստեղծվել է մեր պատմամշակութային ժառանգության մեծագույն մասը, սակայն ցեղասպանության հետևանքով մենք այն կորցրել ենք», - հավելեց Աշոտ Մելքոնյանը:

Պատմաբանը նաև ընդգծեց՝ «Արևմտյան Ադրբեջանը» շինծու տերմին է, ինչպես որ շինծու տերմին է թուրքերի կողմից հորինված «Արևելյան Անատոլիան», այսինքն՝ թուրքերը նկատի ունեն Արևմտյան Հայաստանը: Մինչև Հայոց Մեծ եղեռնը Օսմանյան կայսրությունում գործածվում էր «Էրմենիստան» տերմինը:

«Մենք այդ քարտեզները տպագրել ենք ակադեմիական հայոց պատմության հատորներում: Երբ Արևմտյան Հայաստանում Թուրքիան իրականացրեց Հայոց ցեղասպանությունը, և հայությանը ցեղասպանելով՝ զրկեցին իրենց պատմական հայրենիքից, նրանք այդ տարածքին պետք է անուն դնեին՝ «Արևմտյան Անատոլիա», ինչը նշանակում է Արևելքը: Սա, իհարկե, ծաղր է ու խեղափոխություն, ուստի Արևմտյան Հայաստանն ու «Արևմտյան Ադրբեջանը» բացարձակապես համեմատելի չեն, քանի որ Արևմտյան Հայաստանի պարագայում խոսքը վերաբերում է իրական պատմական հայրենիքին, որը դարեր շարունակ եղել է մեր հայրենիքի անբաժան մասը ու կորսվել Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանությունում իրականացնելու հետևանքով», - շեշտեց Աշոտ Մելքոնյանը:

Չվարթ ԽԱՇՏՈՅԱՆ



## ՆՎԵՐՅԱՆ ԴԱՍԵՐ

Մի ժողովուրդ, որն իրեն պետք եղած ուժն իրենից դուրս է փնտրում, կուրորեն իր պարտությունն ու անկումն է նախապատրաստում:

Չար ու ավերիչ են լինում ստեղծագործելու անգործությունից տառապող ժողովուրդները միայն... Հայուն ծանոթ չէ

չարութեան ուրախությունը: Չարախնդալ, չէ՛, նա կ'ուզե իր գոյութեան թշնամիներին իսկ միայն պարտուած տեսնել, բայց ոչ և՛ դժբախտ...

Թուրքերը Հայկական հարցում երբեք էլ չեն փոխվի, քաղաքակրթվի. նրանք մնում են նույնը, և նրանց հետ լեզու գտնելու քարոզչությունը վնասակար է, իսկ հաշտությունը՝ աղետաբեր...

Անցյալը մոռացողին պատժում է ապագան...

Հայրենիք մի՛ սպասեք օտարից և ճակատագրից, եթե դա ձեր արյունով պաշտպանելու չափ հայրենասեր չեք:

Խոսեցրե՛ք իր եպոսը, իր ֆուկլորը եւ պիտի համոզուեք, որ հայու համար հացը կեցութեան բարիքների շարքում առաջինը չէ:

## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏԻ ԳՐԻՉԷՆ

## «ԱՋԳԻՆ ՎԻՃԱԿԸ»

«...Հօտն անհովիւ՝ մոլոր ու շփոթ, աներեւոյթ եւ անզուսպ ալիքներ յախումն կը յուզին ի խորս մեր հալածական եւ ողբալի կենաց ծովու: Անմիտ որսորդներ բոլորած՝ միամիտ ձկներ ցանցած: Մթնոլորտը թոյն կը տեղայ, բուժիչ ուժ չկայ: Աւերած, սարսափ ու սանձարձակ կեղեքում մէկ կողմէ, անտարբերութիւն, օտարամոլութիւն եւ ցեխոտ սրտեր միւս կողմէ: Փառասիրութիւն, փութկոտութիւն մէկ երեսէն, ապիկարութիւն, տգիտութիւն միւս երեսէն: Իւրաքանչիւր ոք իր պաշտօնն զգեցած է իբր համդերձ, յոր մերկութիւն մտաց ծածկի ի միամիտ աչաց: Մեր մարմինը նեխած է, մեր հոգին ապականած, մեր կենքը դիակնացած... Ո՞ր է մեր խոհական խորեմացին, թող ելլէ՛ արիւն-



քան հոգու տակէն եւ ողբայ մեր խակերու սիրտն ու հոգին, միտքն ու գործը: Մեր նախնիք իրենց պաշտօնին փարած էին անձնահեղձութեամբ, իսկ մենք կը յափշտակենք գործն՝ ընչաքաղցութեամբ: Սիրտս փլած է»:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏ

Թողիկ. «Ամենուն տարեցոյց», Կ. Պոլիս, 1916-1920, թուակիր էջ 61:

## ՀՀ ԳԱԱ Թախտաշյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Ժաննա Հովակիմյանը



Սույն թվականի դեկտեմբերի 23-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ Թախտաշյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց կենսաբանական գիտությունների թեկնածու Ժաննա Հովակիմյանը:

Ներկայացնելով ՀՀ ԳԱԱ Թախտաշյանի անվան բուսաբանության ինստիտուտի զարգացման ծրագիրը՝ նա նշեց, որ Երևանի բուսաբանական այգում ներկայումս իրականացվում է «Կյանքի պուրակ» խոշոր մախազիծը՝ նվիրված Արցախյան ազատամարտի ընթացքում զոհված հերոսների հիշատակին: Ինստիտուտն ակտիվորեն համագործակցում է ներպետական և միջազգային կառույցների հետ: Առկա խնդիրներից է ինստիտուտի և բուսաբանական այգիների ենթակառուցվածքների տեխնիկական վերազինումը:

Ժաննա Հովակիմյանը թվեց այն ուղղությունները, որոնք առաջնահերթ են ինստիտուտի զարգացման համար: «Մենք պետք է պահպանենք և զարգացնենք ինստիտուտի ավանդական առաջատար մասնագիտական ուղղությունները, իրականացնենք ՀՀ ֆլորայի և էկոհամակարգերի in situ և ex situ պահպանության հարցերի հետազոտում, զարգացնենք համագործակցությունը հանրապետական և միջազգային գիտակրթական հաստատությունների հետ, ստեղծենք մոր կապեր, մշակենք ներգրավման մեխանիզմներ երիտասարդ կադրերին

ներգրավելու համար, ավելացնենք միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում տպագրությունների քանակը: Մեր նպատակներից է «Թախտաշյանի» գիտական ամսագրի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին»,- ասաց Ժաննա Հովակիմյանը:

Ժաննա Հովակիմյանը 1999 թ. ավարտել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի կենսաբանության ֆակուլտետը: 1999-2009 թթ. դասավանդել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի բուսաբանության ամբիոնում: 2003 թ. ստացել է կենսաբանական գիտությունների թեկնածուի աստիճան: 2009 թ. ՀՀ ԲՈՅ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի կոչում: 2009-2010 թթ. աշխատել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի էկոլոգիայի ամբիոնում: 2009 թ.-ից մինչ այժմ աշխատում է ՀՀ ԳԱԱ Թախտաշյանի անվան բուսաբանության ինստիտուտի «Երկրաբուսաբանության և էկոլոգիական ֆիզիոլոգիայի» բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող: 2023 թ.-ից դասախոսում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: 2022 թ. հունվարից ինստիտուտի գիտական խորհրդի և 035 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարն է:

Ժաննա Հովակիմյանի աշխատանքների գիտական ուղղվածությունը բույսերի էկոֆիզիոլոգիան է: Նա զբաղվել է Հայաստանում տարածված արժեքավոր ուտելի և համեմունքային բույսերի, ինչպես նաև անտառահատումների հետևանքով խոշորաճեղ կաղնու էկոֆիզիոլոգիական և կենսամորֆոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությամբ: Ներկայիս գիտական հետազոտությունները նվիրված են Հայաստանի կենսաբազմազանության թեժ կետերում և բուսաբանական այգիներում աճող հազվագյուտ և վտանգված կարմիր գրքային բուսատեսակների մոնիթորինգի և հարմարվողականության էկոֆիզիոլոգիական հատկանիշների գնահատման հարցերին:

Ժաննա Հովակիմյանը 51 գիտական հրապարակումների հեղինակ է, որից 4-ը՝ մենագրություն: Նա 3 գյուտի արտոնագիր ունի: 2023 թ. պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ-ի հրեյա-նական 80-ամյակի ոսկե հուշամեդալով:

## ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Գոհար Իսկանդարյանը



Սույն թվականի դեկտեմբերի 23-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց պատմական գիտությունների թեկնածու Գոհար Իսկանդարյանը:

Շուրջ չորս ամիս Գոհար Իսկանդարյանը եղել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը: Նա նշեց, որ այդ ամիսների ընթացքում կնքվել են համագործակցության հուշագրեր հետազոտական կառույցների հետ, իրականացվել են միջազգային համագործակցության ընդլայնմանն ուղղված քայլեր:

Գոհար Իսկանդարյանն առաջարկում է գիտական մոր ուղղություններ սահմանել՝ ընդլայնելով ժամանակակից Ադրբեյջանի ուսումնասիրությունները, բացել խորալեզագիտության, քրդագիտության ուսումնասիրությունների բաժիններ, իրականացնել նաև Արևելքի երկրների տնտեսության, գրականության, մշակույթի, լեզվի, արվեստի ուսումնասիրություններ:

Գոհար Իսկանդարյանը շեշտեց ինստիտուտի երիտասարդացման խնդիրը՝ նշելով, որ անհրաժեշտ է գիտական մոր կադրերի համալրում, ասպիրանտների գիտական թեմանե-

րի շտեմարանի ստեղծում: Նրա խոսքով՝ 2026 թ. Հայաստանում կանցկացվի Երիտասարդ արևելագետների միջազգային գիտաժողովը:

Գոհար Իսկանդարյանը 1993-1997 թթ. սովորել է Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմաաշխարհագրական ֆակուլտետում, 1994-1999 թթ.՝ Երևանի Հրաչյա Աճառյան համալսարանի միջազգային հարաբերություններ և թարգմանչություն ֆակուլտետում, 1999-2002 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ, 2003 թ. ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1999 թ.-ից Գոհար Իսկանդարյանն աշխատել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում: 2002 թ. ծանաչվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի լավագույն երիտասարդ գիտաշխատող: 2007-2009 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ նախագահության միջազգային կապերի վարչությունում՝ որպես ավագ մասնագետ, 2007-2024 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ նախագահության Սփյուռքի բաժնի գիտքարտուղարը: 2022 թ. նա մշակվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ:

Գոհար Իսկանդարյանը 7 մենագրության, 41 գիտական հրապարակման հեղինակ է: Նրա խմբագրությամբ տպագրվել է 4 գիրք:

Գիտական գործունեությամբ զուգահեռ Գոհար Իսկանդարյանը զբաղվում է մանկավարժական գործունեությամբ: 2002-2010 թթ. նա դասախոսել է Երևանի Հրաչյա Աճառյան համալսարանում, 2008 թ.-ից դասախոսում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի արևելագիտության ամբիոնում, 2013 թ.-ից՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի մշակութաբանության ամբիոնում, 2015 թ.-ից՝ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում, 2016 թ.-ից՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայաստանի հարակից երկրներ ամբիոնում:

## ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Հրաչյա Ասցատրյանը



Սույն թվականի դեկտեմբերի 23-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրաչյա Ասցատրյանը:

Նա ներկայացրեց ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տեսլականը: «Մենք պետք է շարունակենք խթանել համակարգչային գիտության մեջ հետազոտական գերազանցությունը՝ կենտրոնանալով նորարարական ոլորտների վրա, ունենալ կարևոր դեր երկրում սոցիալական տարբեր մարտահրավերների հաղթահարման գործում և ազ-

գային մակարդակով տրամադրենք ենթակառուցվածքներ գիտական հանրությանը և արդյունաբերությանը: Ինստիտուտը պետք է այս առաջնությունով ծավալի իր գործունեությունը: Դա իրականացնելու համար մեր ռազմավարությունն է միավորել գիտությունը, կրթությունը և արդյունաբերությունը՝ զարգացնելով համագործակցությունը»,- ասաց Հրաչյա Ասցատրյանը:

Որպես խոշոր ձեռքբերում Հրաչյա Ասցատրյանը նշեց 2024 թ. մայիսին Երևանում Ինժեներական քաղաքում բացված Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնի կարևորությունը: Այս կենտրոնում է տեղադրված տարածաշրջանում եզակի՝ «Ազնավուր» գերհամակարգիչը: Հայաստանի ազգային գերհամակարգչային կենտրոնի շահագործումն ու սպասարկումն իրականացնում է ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը:

Հրաչյա Ասցատրյանը ծնվել է 1976 թ.՝ Երևանում: 1998 թ. ավարտել է ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը, 2001 թ. ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2020թ. Ֆրանսիայի Թուլուզի ազգային պոլիտեխնիկական ինստիտուտում ստացել է գիտությունների դոկտորի գիտական աստիճան, որը համապատասխանեցվել է ՀՀ տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին 2022 թ., իսկ 2024

թ. Հրաչյա Ասցատրյանը ստացել է պրոֆեսորի գիտական կոչում:

Հ. Ասցատրյանը 1995 թ.-ից ընդգրկված է ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի համակարգում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ, իսկ 2018 թ.-ից ինստիտուտի տնօրենն է: Նա հեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածի, որից շուրջ 70-ն ընդգրկված են «Web of Science» և «Scopus» միջազգային գիտաչափական շտեմարաններում: Նա մասնակցել կամ ղեկավարել է 50 միջազգային և 12 հանրապետական մախագծեր:

Պրոֆեսոր Ասցատրյանը նաև զբաղվում է մանկավարժական գործունեությամբ՝ դասավանդելով Հայաստանի ամերիկյան համալսարանում, Հայֆրանսիական համալսարանում, ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնում, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում, Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում:

2004 թ. նա արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի, իսկ 2023 թ.՝ ՀՀ վարչապետի հուշամեդալի:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## Ակադեմիական Նոր հրատարակություն

1. Հեղ.խումբ - Պատկերապաշտության և պատկերամարտության խնդիրը Հայաստանում և Բյուզանդիայում (հոդվածների ժողովածու):

2. «Ավետարանոցի Իվան Աթայանի անվան դպրոցը 150 տարեկան է...» (կազմող՝ Կ. Աթայան):

3. Վ. Սահակյան - Բարդ համակարգերի մոդելավորում (ուսումնամեթոդական ձեռնարկ):

4. Հ. Սահակյան - Դիսկրետ մաթեմատիկայի գործիքներ:

5. Կ. Սարգսյան - Մարդկային ռեսուրսների կառավարում:

6. «Սերգեյ Փարաջանով – 100» (գիտական հոդվածների ժողովածու):

7. «Շիրակ. Հայոց բանահյուսական մշակույթը»:

8. «Պարույր Սևակ – 100» (գիտական հոդվածների ժողովածու):

9. «Գրականագիտական հանդես», 2024 թ., N 2:

10. «Պատմաբանասիրական հանդես», 2024 թ., N 3:

11. Հեղ.խումբ - Գրական ուղղությունները և դպրոցները համաշխարհային դասական գրականության և ազգային գրականությունների համատեքստում (միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու):





Բացառիկ երևույթ է, որ մեկ անհատի մեջ միավորվեն մարդու, գիտնականի և քաղաքացու անանց որակները, և այս ամենը՝ միասին և միաժամանակ, նրա ողջ երկրային կյանքում: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարդգես Ալեքսանի Միքայելյանն այդպիսի եզակի անհատներից էր: Եվ մեզ՝ նրա կրտսեր գործընկերների համար շատ դժվար է այսօր, տարիների հեռավորությունից նախապատվություն տալ նրա գործունեության մեջ սերտաճած այդ որակներից որևէ մեկին, որովհետև նա այդ բոլորը շռայլորեն ի հայտ էր բերում ամենուրեք՝ միայն իրեն հատուկ շիտակությամբ ու անմիջականությամբ:

Վարդգես Ալեքսանի Միքայելյանը ծնվել է 1924 թ. դեկտեմբերի 5-ին ՀԽՍՀ Աշոցքի շրջանի Ղազանջի գյուղում: 1941 թ. միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, որպես ուսուցիչ, աշխատել է շրջանի Քեֆլի և Քոռաբլուր գյուղերում: Ապա զորակոչվում է և 1942–1947 թթ. ծառայում խորհրդային բանակում, մասնակցում Հայրենական մեծ պատերազմին՝ պարգևատրվելով շքանշաններով ու մեդալներով: Ջորաջրվելուց հետո սովորում է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում և 1952 թ. ավարտում գերազանցությամբ դիպլոմով: 1955 թ. պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Գյուղացիության դրությունը և գյուղացիական ելույթները Հայաստանում 1918-1920 թթ.» թեմայով: 1955-1959 թթ. աշխատել է «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունում: Պատմաբանի գիտագործնական աշխատանքի օրրան է դառնում ՀՀ ԳԱ ակադեմիան. 1960–1972 թթ. Պատմության ինստիտուտում ավագ գիտական աշխատող էր, 1988 թ.՝ գաղթաբանների բաժնի վարիչ: Պատմական գիտությունների դոկտոր է 1965 թ. («Ղրիմի հայկական գաղութի պատմություն» թեմայով), պրոֆե-

սոր՝ 1978 թ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.: Մահացել է 2005 թ. մարտի 31-ին:

Վաստակաշատ հայագետի գիտական հետաքրքրությունների շրջանակը լայն և ընդգրկուն է եղել՝ ներառելով հայ ժողովրդի նոր ու նորագույն շրջանների պատմության բազմաբնույթ հարցեր: Նա առաջիններից էր, ով, գիտակցելով հայ գաղթավայրերի նշանակությունը մեր պատմության մեջ, հետազոտության թեմա ընտրեց հայկական գաղթավայրերի ուսումնասիրությունը: Վ. Միքայելյանի վաստակն անգնահատելի է միջնադարի ամենախոշոր՝ Ղրիմի հայ գաղութի ուսումնասիրության բնագավառում: 1964 թ. լույս տեսավ գիտնականի «Ղրիմի հայկական գաղութի պատմություն» առաջին գիրքը: Դրան հաջորդեցին Ղրիմի հայկական գաղթաբանների պատմությանը նվիրված հաջորդ մենագրությունները. 1970-ին հրատարակեց «Ղրիմի հայկական

և Վ. Դոլգիսին հանձնված Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ գիտական միակ փաստաթուղթը Վ. Միքայելյանի շարադրած բովանդակալից ու հիմնավոր տեղեկանքն էր: Պատմագիտական այս խիստ արժեքավոր փաստաթուղթը՝ «Некоторые вопросы истории Нагорного Карабаха» վերնագրով և մասնակի լրացումներով (անվանի պատմաբան Լ. Խուրշուդյանի հեղինակակցությամբ)՝ լույս տեսավ ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի 1988 թ. 4-րդ համարում: 1992 թ. տպագրվեց «Нагорный Карабах в 1918-1923 гг.: Сборник документов и материалов» խորագրով ժողովածուն, որի կազմողների ղեկավարը, պատասխանատու խմբագիրը և ընդարձակ ներածության հեղինակը կրկին այս հիմնահարցի հեղինակավոր գիտակ Վ. Միքայելյանն էր:

Ակադեմիկոսն անուրանալի ավանդ ու-

տարիներ՝ 1972-1987 թթ., եղել է ՀԽՍՀ ԳԱ ավագագույն «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիրը: Նրա խմբագրության ժամանակաշրջանում «Լրաբերը» ձեռք բերեց արդիական ակադեմիական հրատարակության այն լավագույն և մասնագիտական որակները, որոնք այսօր ևս հարատևում և հաջողությամբ զարգացվում են այդ հանդեսի հարգարժան խմբագրության կողմից:

1989-1990 թթ. Վ. Միքայելյանը հիմնադրեց և խմբագրեց «Գոյամարտ» շաբաթաթերթը, որի առաջնահերթ խնդիրը պատմա-հայրենասիրական հարցերի և Արցախյան հիմնախնդրի լուսաբանումն էր:

1999-2005 թթ. Վ. Միքայելյանն աշխատել է որպես հայագիտական ու հասարակագիտական մեծ համբավ ունեցող ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր: Իր համարձակ, նախաձեռնու-

## ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆԸ ԵՎ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԽՄԱՐԱԳԻՐԸ

(Ապոլոնիոս Վարդգես Միքայելյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

գաղութի պատմություն (1801-1917)» աշխատության 2-րդ գիրքը, 1974-ին՝ «На крымской земле», 1989-ին՝ «Ղրիմահայոց պատմություն» և 2004-ին՝ «История крымских армян» (Симферополь): Ըստ էության, նույն թեմայի շարունակություն էր 1979 թ. լույս տեսած պատմաբանի «Ծովակալ Լ. Մ. Սերբերյակով (Ղազար Մարկոսի Արծաթագործյան)» աշխատությունը, որտեղ լուսաբանվում են հայ ծովակալի առաջնակարգ տեղն ու դերը ռուսական սևծովյան նավատորմի պատմության մեջ, հատկապես Ղրիմի պատերազմի ընթացքում:

Ղրիմահայոց պատմությանը նվիրված գրքերով Վ. Միքայելյանը նաև անդրադարձել է հայ ժողովրդի միջազգային կապերին: Այս առումով խոշոր արժեք ունեն «Հայ-իտալական առնչություններ, ջենովական փաստաթղթերը Ղրիմահայերի մասին» (1974 թ.) ժողովածուն և «Ղրիմահայ գաղութը Արևելք-Արևմուտք հարաբերությունների ոլորտում (13-18-րդ դարեր)» (2000 թ.) մենագրությունը:

Հետագա տարիներին ևս Վ. Միքայելյանը շարունակել է ուշադրության կենտրոնում պահել հայ գաղթավայրի պատմությունը: Նրա նախաձեռնությամբ և խմբագրությամբ նախապատրաստվել ու հրատարակվել է «Հայ գաղթաշխարհի պատմության» եռհատորյակը:

Անվանի պատմաբանի գիտական ուսումնասիրության մյուս կարևոր ոլորտը, որտեղ նա մեծ ներդրում ունի, Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման ուղղությամբ անգնահատելի ծառայությունն է: Բոլորին է հայտնի, որ 1988 թ. մարտի 2-ին Երևան ժամանած խՍՀԿԿ Կենտկոմի քարտուղարներ Ա. Լուկյանովին

նի Հայկական հարցի և Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում: Գերմաներենի իմացությունը նրան հնարավորություն տվեց 1989 թ. մեկնելու Բոնն՝ գերմանական արխիվներում Հայոց ցեղասպանության վերաբերյալ նյութերի ուսումնասիրության համար: Կարճ ժամանակամիջոցում նա ժողովեց ավելի քան 3500 արխիվային միկրոկարտեր, որոնցից 1000-ից ավելին տեղ են գտել 1995-ին նրա կազմած «Армянский вопрос и Геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политического архива м-ва иностранных дел кайзеровской Германии» վերնագրով ժողովածուում՝ իր առաջաբանով, ներածությամբ և արժեքավոր ծանոթագրություններով:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը հիշյալ ժողովածուն 2004 թ. հրատարակեց գերմաներեն՝ «Die armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei (1913-1919)» վերնագրով:

Նկատենք նաև, որ 1980-ական թվականներից Վ. Միքայելյանը տասնյակ հոդվածներ, գրքեր է հրատարակել, ժողովածուներ կազմել Հայոց ցեղասպանության մասին: Այսպես, 1991 թ. նա հրատարակեց «Генрих Фирбюхер. Армения, 1915. Уничтожение Турцией культурного народа», 1997-ին՝ «Գերմանացի դիվանագետները հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին (1915)» գրքերը:

Ակադեմիկոս Վ. Միքայելյանը գիտական արդյունավետ աշխատանքը զուգակցել է խմբագրական-կազմակերպչական եռանդուն գործունեությանը: Խմբագրական-հրատարակչական աշխատանքը նրա համար տարբեր էր, ինքնաբերուկ նվիրում: Երկար

դական քայլերով նա հանդեսի հեղինակությունը մի նոր մակարդակի բարձրացրեց:

ՀՀ ԳԱԱ վերոհիշյալ երկու հանդեսներն էլ առ այսօր շարունակում են ընթանալ այն մնայուն և անկորոցելի արժեքներով, որոնք հարստացրել և իբրև ժառանգություն է փոխանցել Վ. Միքայելյանը՝ թողնելով իր անընձելի հետքը հայ գիտական լրագրության պատմության մեջ:

Վ. Միքայելյանի գործունեության մեջ նշանակալի տեղ է զբաղեցնում մասնավորապես աշխատանքը. շուրջ երկու տասնամյակ հատուկ դասընթացներ է վարել Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմաաշխարհագրական ֆակուլտետում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է ավելի քան մեկ տասնյակ թեկնածուական ատենախոսություն:

Ականավոր պատմաբանը գիտական-խմբագրական տարիների իր տքնաջան և շնորհակալ գործունեությամբ, պատմության խոր իմացությամբ և նուրբ դիտողականությամբ միշտ կիլիշի հայագիտության մեջ:

Ակադեմիկոս Վ. Միքայելյանը մեր ժողովրդի այն նվիրյալ զավակներից էր, ով ոչ միայն իր գիտական անուրանալի վաստակով, այլև եռանդուն գործունեությամբ, մարդկային ու քաղաքացիական հարուստ նկարագրով իր ուրույն և մշտանմա տեղն ունի մեր երախտավորների շարքում:

**Ալբերտ ԽԱՌՍՅԱՆ**  
**ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ**

**Անուշավան ԶԱՔՐԱՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների դոկտոր**

## ՀՀ ԳԱԱ-ում քննարկվեցին Շիրվանի, Գարդմանի և Նախիջևանի հայության պատմական, իրավական, ժողովրդագրական և սոցիալական հիմնախնդիրները

Ս/թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Շիրվանի, Գարդմանի և Նախիջևանի հայությունը. տեղաբնիկությունից մինչև փախստականության (պատմաիրավական հարցեր)» թեմայով գիտաժողովը, որը կազմակերպել էին «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամն ու «Գարդման, Շիրվան, Նախիջևան» համահայկական միությունը:

Գիտաժողովը նվիրված էր Շիրվանի, Գարդմանի և Նախիջևանի հայության պատմական, իրավական, ժողովրդագրական և սոցիալական հիմնախնդիրներին:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը: Նա նշեց, որ Ադրբեջան պետությունն ստեղծման առաջին իսկ օրվանից իր առջև խնդիր էր դրել դուրս մղել հայությանն իր վերահսկողության տակ գտնվող տարածքներից: «1918-1920 թվականների ընթացքում Շիրվանի, Գարդմանի, Նախիջևանի տարածաշրջաններում իրականացվեցին տեղի հայ բնակչության կոտորածներ, բազմաթիվ հայեր ստիպված եղան լքել իրենց բնակության վայրերը և փախստական դառնալ: Նույնը կրկնվեց 1988-1990 թվականների ընթացքում, երբ արդեն խորհրդային Ադրբեջանի իշխանությունները կազմակերպեցին Սունգայիթի, Կիրովաբադի, Բաքվի և այլ

վայրերի հայության կոտորածները: Հազարավոր հայեր ստիպված եղան լքել այդ տարածքները: Եթնիկ գտումների և ցեղասպանության հետևանքով այսօր Ադրբեջանի տարածքում հայ չի մնացել: Սակայն այդ պետությունը, նրա իշխանությունները, այդ հանցանքները կազմակերպած անձինք մինչ օրս դեռ պատասխանատվության չեն ենթարկվել մարդկության դեմ իրենց իրագործած հանցանքների համար», - ասաց Ռոբերտ Ղազարյանը: Նա նշեց, որ կարևոր նշանակություն ունի ուսումնասիրել և քննարկել փախստականների իրավական, տնտեսական, սոցիալական և ժառանգության պահպանման հիմնախնդիրները:

«Գարդման-Շիրվան-Նախիջևան» համահայկական միության նախագահ, Ազգային ժողովի պատգամավոր Վիլեն Գաբրիելյանը նշեց, որ պատմական Շիրվանի, Գարդմանի և Նախիջևանի հայաթափումը ոչ միայն հանցագործություն է տվյալ երկրամասերի հայության բնական իրավունքների դեմ, ոչ միայն մշակութային ցեղասպանություն է, այլև հանգեցրել է հայության այդ հատվածների կենցաղի ու ավանդական տվորթաբանի փակաբան միջավայրի կորուստի: «Նման իրողությունների ֆոնին պատմական անցյալի բազմաշերտ ուսումնասիրությունը, նորովի մեկնաբանումը և դրանց թիրախային գնահատականները մերօրյա

տարածաշրջանային պատմաքաղաքական իրողությունների տիրույթում մեծ կարևորություն և գիտագործնական արժեք ունեն», - ասաց Վիլեն Գաբրիելյանը:

Նա նշեց, որ միջազգային հանրության առաջ այսօր ծառացած ամենասուր խնդիրներից մեկը փախստականության խնդիրն է: «Մենք ակամատես ենք լինում տարբեր վարչակարգերի կողմից մարդու իրավունքների և ազատությունների զանգվածային խախտման: Համոզված ենք, որ այս համաշխարհային միտումը պետական հանցագործությունների հանդեպ անհետևողականության և պատժի ու պատասխանատվության միջազգային մեխանիզմների անարդյունավետության և անգործության հետևանք է», - ասաց Վիլեն Գաբրիելյանը:

Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի տնօրեն Արման Եղիազարյանը նշեց, որ, ցավոք, 21-րդ դարում ստիպված ենք նորից քննարկել հայ ժողովրդի՝ իր ազգային տարածքում տեղաբնիկ լինելու խնդիրները: «Մենք բախվել ենք մի իրողության, որ հայերի զանգվածային տեղահանության հետևանքով հակառակորդը փորձ է անում ջնջել հայության հետքերը, հայության ներկայությունն այդ տարածքներում», - ասաց Արման Եղիազարյանը:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան

Մխիթար Գաբրիելյանը կարևորեց նմանատիպ գիտաժողովների անցկացումը՝ նշելով, որ գիտական ուսումնասիրության արդյունքները պետք է դառնան գեներ ու գործիք ինստիտուցիոնալ մակարդակում: «Այդ արդյունքները կօգնեն պատկան մարմիններին մեր մշակութային ժառանգության համար պայքարի դաշտում», - ասաց Մխիթար Գաբրիելյանը:

Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ապաստանի տրամադրման վարչության ծագման երկրների վերաբերյալ տեղեկատվության բաժնի պետ Իրինե Հակոբյանն անդրադարձավ Արցախից բռնի տեղահանվածների խնդիրներին, ներկայացրեց պետության կողմից իրականացվող սոցիալական ծրագրերը:

Գիտաժողովի ընթացքում զեկուցումներով հանդես եկան գիտնականներ և մասնագետներ ՀՀ գիտակրթական կառույցներից՝ ներկայացնելով Շիրվանի, Գարդմանի և Նախիջևանի հայության խնդիրները, վերհանելով պատմական արդարության վերականգնման, բռնագաղթած հայերի իրավունքների պաշտպանության և այլ հարցեր:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**



## ԻՍԱՀԱԿՅԱՆ ՏՈՒՄԻ ԱՌԵՆԿԱՅԸ

Հայ ժողովրդի մեջ դժվար լինի մի անհատ, որ չճանաչի Ավետիք Իսահակյան բանաստեղծին, արձակագրին, փիլիսոփային, մի խոսքով՝ համճարեղ գրողին: Նրան հաղորդվում ենք դպրոցից, առտնին զրույցներում հնչում են նրա իմաստուն բանաձևումները, հունորիկ պատմությունները, կայծակի պես կտրուկ կարծիքները:

Արդարև, աշխարհառջակ գրող, որ պատիվ է բերել մեր ժողովրդին ու գրականությանը: Նրա միակ զավակը՝ Վիգեն Իսահակյանը, ժառանգել է տոհմական տաղանդ, որը բացահայտվեց, երբ նա 75 տարեկանից անց էր, գրելով «Հայրս» սքանչելի հուշագրությունը: Նրա անունը կարելի է վստահաբար ընդգրկել Գինեսի գիրք. 94 տարեկանում սկսում և ավարտում է ծավալուն «Փարիզ, Քոչար, անցած օրեր»՝ մեզանում մնալու չունեցող գիրքը:

Այս վերջին տարիներին իր արձակը՝ էսենները, մեզ է պարզաբան Իսահակյան տոհմի երրորդ հզոր ալիքը՝ գրականագետ Ավիկ Իսահակյանը:

Գնաց հոր հետքերով, արհամարհեց տարիքը, ինչպես հայրը: Շարունակեց պատկերել իր բազմաշերտ, խորդուբորդ ընթացքի գեղարվեստական սրտագիծը՝ կարդիոգրաման: Իհարկե չասել նրա հարուստ գրականագիտության, տեքստաբանության մասին՝ ամփոփություն է, Իսահակյան Ավետիքը վստահաբար երջանիկ է իր դասական ճոճքում, որ ունի Ավիկ թոռ, մեծերից թշերն են արժանանում մնալ բախտի: Ավիկ Իսահակյանը ամբողջ կյանքում ուսումնասիրել, գրքերի է վերածում տպագրված ու անտիպը, ակադեմիական հատորների է վերածել մեծն Իսահակյանի ժառանգությունը:

Ահա այս բազմազբաղ այրը (նաև պաշտոնավարելով նախկինում ԳԱԹ-ի և գրա-

**Խմբագրության կողմից. վերջերս լրացավ վաստակաշատ գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տեքստաբանության բաժնի վարիչ Ավիկ Վիգենի Իսահակյանի ծննդյան 80-ամյա հոբելյանը, ինչի առթիվ «Գիտություն» թերթի խմբագրությունը շնորհավորում է անվանի գրականագետին և մաղթում ամենայն բարին: «Գրական թերթի»՝ ա/թ. նոյեմբերի 29-ի համարում հոբելյանի առթիվ զետեղվել են շնորհավորանքի և գնահատանքի ջերմ խոսքեր, որոնցից որոշ հատվածներ ներկայացնում ենք մեր ընթերցողներին:**

կանության ինստիտուտի, ապա Գիտությունների ակադեմիայի հայագիտական հիմնադրամի տնօրեն) սրտի թելադրանքով գնում է պապի և հոր բացած ճամփեքով և վախ չունի, քանզի տաղանդը բնածին է, և թյուր է այս պարագայում խոսքը, թե համաճարներից հետո արյունը հանգստանում է, ընդհակառակը, Ավիկը տարին տարվա վրա մոր գրքեր է հրատարակում՝ «Երևանը երազում և արթմնի», «Մեր ախպարները», նաև անսպասելի՝ սիրային վեպ և այլն:

Ավիկ Իսահակյանը տոհմական մշանը՝ որպես գրականագետ և իբրև արձակագիր ու մտածող այր, բարձր և բաց ճակատով տանում է և դեռ երկար կտանի (Իսահակյանները երկարակյաց են) հայոց գրի սրբազան ուխտի ճանապարհով:

**Էդվարդ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ**  
**Հայաստանի գրողների միության նախագահ**

## ԲՆՈՒԹՅԱՆ ՍԻՐՎԱԾ ԶԱՎԱԿՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Իմ հին ընկերը և բարեկամը՝ Ավիկ Իսահակյանը, արդեն 80 տարեկան է, որից 60-ը մենք անցկացրել ենք միասին, ոչ միայն իբրև հասակակից ընկերներ և «մեծ ճանապարհի ճանապարհորդներ», այլև գաղափարակիցներ, «ազատ մտքի» որոնողներ, իբրև հոգևոր մույն Տաճարի մասնակիցներ, ուր ամեն մեկը բերում է ճակատագրից ստացած «իր բաժին» արժեքները, յուրաքանչյուրն իր կշռով ու չափով (այն, ինչ Բնությունը տալիս է մարդուն, սակարկելու ենթակա է):

Լինելով Մեծ Մտածողի ժառանգորդը՝ Ավիկ Իսահակյանը, «չանհետացավ» նրա սովորի տակ (ինչպես պատահում է շատերի հետ, ինչը ներքին անհատականության անբավարար զարգացման հետևանք է). նա ինքը, անկախ ամեն ինչից, ինքնուրույն ան-

հատ է գրականության մեջ, իր սեփական տեղն ու հեղինակությունն ունեցող ամենավորություն, որը և՛ *գիտնական* է (Ավ. Իսահակյանին նվիրված բազմաթիվ գիտական ուսումնասիրությունների հեղինակ), և՛ հրաշալի *էսսեագիր* (Երևանի մոտիկ անցյալին վերաբերող հյուսիս և բովանդակալից էսսեները, որ նա ստեղծել է՝ յուրօրինակ կերպարների մի ողջ պատկերասրահ), և՛ պրոֆեսիոնալ *արձակագիր* (վերջերս լույս տեսավ նրա ինքնակենսագրական վեպը) և այլն:

Ամեն տեղ աչքի է ընկնում նրա ինքնատիպ լեզվամտածողությունը, և որ տվյալ դեպքում ամենակարևորն է՝ նրա ներքին *ազնվականությունը* (այն, ինչը տրված է և ոչ ձեռք բերված): Եվ, ի վերջո, Ավիկ Իսահակյանը Բնության սիրված զավակներից է, իր կյանքի ներհուն և ներդաշնակ ուղեկիցը (թող սա պարադոքս չթվա, որովհետև բոլորը չէ, որ իրենց կյանքի ուղեկիցներն են), որի 80 տարին իր ներքին զարգացման բարձրակետն է, բայց ոչ վերջակետը, ինչի մասին հին հույներն ասում էին՝ «Կյանքը կրակի հավերժական շրջագայություն է», իսկ ժամանակը «մեր մշտական ներկայությունն է այդ շրջադարձի մեջ»:

**Հենրիկ ԷՊՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

## «ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻՆ ԼԻՆ ԴԱՅՆԱՌ»

Ավիկ Իսահակյանի հետ իմ առաջին ծանոթությունը եղել է դեռևս վաղ պատանեկության տարիներին Ավետիք Իսահակյանի՝ մեր տան գրադարանում պահվող ժողովածուներից մեկում պապի և թոռան լուսանկարով: Այսօր արդեն բոլորիս համար պարզ է, որ չնայած հետագա տասնամյակներին ունեցած ամենատարբեր հետաքրքրություններին ու գործունեության բազմազանությանը (գրականագետ, տեքստաբան, գրող, մանկավարժ, Գրականության և արվեստի թանգարանի, Գրականության ինստիտուտի տնօրեն, Հայագիտական հետազոտությունների ֆինանսավորման համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն...), ըստ էության՝ մանկությունից մինչև պատանեկության հասակը պապի՝ հայ գրականության մեծերից մեկի՝ Վարպետի կողքին լինելու, նրա հոգևոր ու մտավոր բարերար ազդեցությունը կրելու համաժամանակ որոշակիորեն կազմավորել ու ձևավորել է Ավիկ Իսահակյանի ներաշխարհի հարստությունը, զգացմունքների նրբությունը, մտքի սրությունն ու ճկունությունը՝ որոշակիորեն այն ուղղորդելով դեպի օբյեկտիվ գիտականություն: Այդ պատճառով էլ նրա գիտական

գործունեության առաջնքը տասնամյակների ընթացքում եղել է իսահակյանագիտությունը:

2000 թվականից ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում նա ղեկավարում է Ավետիք Իսահակյանի Երկերի լիակատար ակադեմիական հրատարակության գիտական խումբը, որն արդեն իսկ հասցրել է ընթերցողներին հանձնել նախատեսված 14 հատորների զգալի մասը: Անցյալ դարի 70-ական թվականների սկզբից սկսած՝ Ավիկ Իսահակյանը գրել է Վարպետի ստեղծագործության քննությանը նվիրված շուրջ մեկ տասնյակ մենագրություններ և ուսումնասիրություններ, 200-ից ավելի հոդվածներ և հրապարակումներ, որոնք հրատարակվել են ոչ միայն Հայաստանում, այլև մի շարք այլ երկրներում:

Ավիկ Իսահակյանի լուրջ ու ծավալուն աշխատությունները նվիրված են Վարպետի՝ համեմատաբար քիչ ուսումնասիրված գեղարվեստական արձակի, պոեմների, համաշխարհային և հատկապես ռուս գրականության հետ ստեղծագործական առնչությունների, ազգային ու համամարդկային փոխհարաբերության, Հայրենիք-Սփյուռք կապերի գիտական համակողմանի քննությանը: Եվ այդ ամենը՝ պատկերավոր ոճով ու լեզվով:

Վերջին տասնամյակում Ավիկ Իսահակյանը հրատարակել է հուշագրական-խոհագրական արձակի ժանրի երկեր՝ «Երևանը երազում և արթմնի. երկու դարի միջև» (2014), «Սա է իմ ընտրությունը» (2021), «Սևանա կղզի...» (2022), որոնք ունեն ճանաչողական արժեք, աչքի են ընկնում գեղարվեստական բարձր մակարդակով և ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ:

1954 թ. սիրելի թոռան՝ Ավիկի տասնամյակի կապակցությամբ Վարպետն իր սրտի խոսքն է ասել նրան՝ «Ավիկին» վերնագրված ոտանավորով պատգամելով.

Կյանքիդ ուղին լինի պայծառ,  
Ամեն քայլը՝ ազնիվ, արդար:  
Լինես խոնարհ, լինես գիտուն,  
Եվ ունենաս սիրտ զգայուն...

Ու նաև՝ «Միշտ օգնելու լինես պատրաստ//Տանջվող մարդուն և ընկերին», «Անդավաճան, անհուն սիրով/Հայրենիքիդ լինես պաշտպան»: Պատգամներ, որ տասնամյակներ շարունակ ուղեկցել են նրան դառնալով իր կյանքի անխափան ուղեմիջները, և որոնց նա հավատարիմ է մնացել միշտ՝ գոհացնելով ու երջանկացնելով երկնային հավերժության մեջ թափառող Վարպետի հոգին:

**Պետրոս ԴԵՄԻՐՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների դոկտոր**

## ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Պետրոս Ալահայտոյան-90» հոբելյանական գիտաժողովը

Ս/թ. նոյեմբերի 29-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Պետրոս Ալահայտոյան-90» հոբելյանական գիտաժողովը՝ նվիրված երաժշտագետ, բանահավաք, խմբավար ու հասարակական գործիչ Պետրոս Ալահայտոյանի ծննդյան 90-ամյակին: Հոբելյանական գիտաժողովը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը:

Բացման խոսքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը Պետրոս Ալահայտոյանին անվանեց հայ ժողովրդական երաժշտության, ոչ մյուսական մշակութային ժառանգության պահապան: Նա ընդգծեց, որ Պետրոս Ալահայտոյանը եղել է Կոմիտասի սան Բարսեղ Կանաչյանի աշակերտը: Ցեղասպանության 70-րդ և Կոմիտասի մահվան 50-րդ տարելիցների կապակցությամբ նա լծվել է ազգանպաստ մնալուն աշխատանքի. 1985 թվականից այցելել է Եվրոպայի, Արևելքի և ԱՄՆ-ի հայկական համայնքներ, ծերանոցներ՝ ծայնագրելով կարևոր ազգագրական և փաստագրական նյութեր: 2022 թվականին իր բացառիկ հավաքածուն՝ 450 տուփ մագնիտոֆոնային ձայնագրություն և 126 տուփ մագնիտոֆոնային ժապավեն, Պետրոս Ալահայտոյանը նվիրաբերել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտին: «Այս հավաքածուն կարևոր շտեմարան է ոչ միայն արվեստագիտական, ֆուլկլորագիտական, բանասիրական, այլև ցեղասպանագիտական հետազոտութ-



յունների համար»,- նշեց Աննա Ասատրյանը:

Պետրոս Ալահայտոյանի հետ ընկերության մասին պատմեց և հիշողություններով կիսվեց կոմպոզիտոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Տիգրան Մանուկյանը: «Պետրոսը շատ բարի մարդ էր և այնքան անսովոր գիտական ճանապարհ էր անցել: Նա տրվել էր այս երգերի հավաքագրմանը: Երբ իր գիրքը լույս տեսավ, ես այդպիսի կապ մարդու և գրքի միջև չէի տեսել, գիրքն իր զավակն էր: Ավելի շատ երաժիշտ էր, գիտական միտքն իր խորքերում էր: Այս գիտաժողովը մորուքի է արժևորում այն, ինչ արել է Պետրոս Ալահայտոյանը՝ գիտական լուրջ տարածք ստեղծելով իր աշխատանքի, իր անձի հանդեպ»,- ասաց մասնորո Տիգրան Մանուկյանը:

Պետրոս Ալահայտոյանի կյանքն ու գործունեությունն ուսումնասիրել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի գիտաշխատող Անի Հակոբյանը: Նա նշեց, որ Պետրոս Ալահայտոյանի ամբողջ հավաքածուն՝ նվիրված Արվեստի ինստիտուտին, ամբողջությամբ թվայնացվել է, իսկ շուրջ 400 տուփ ժապավեն նաև ամենագրավորվել է:

Անի Հակոբյանը հանդես եկավ «Պետրոս Ալահայտոյանի բանահավաքչական հունձքը և դրա ճակատագիրը» զեկուցմամբ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Մարիաննա Տիգրանյանը ներկայացրեց «Կիլիկյան Հայաստանի պատմական երգերը Պետրոս Ալահայտոյանի ձայնագրություններում» զեկուցումը:

Ժողովրդական երգերի կատարումներով հանդես եկան Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգչուհի Լուսին Օրդուխանյանն ու ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոնի «Ակունք» ազգագրական համույթի մեներգիչ Աբել Աբեղյանը:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**



## Անդրադարձ վասարակաշար արվեստագետի արժեքավոր հուշագրությանը

(Ակադեմիկոս Ռուբեն Զարյանի ծննդյան 115-ամյակի առթիվ)

վեստի» խմբագիրն էր:

Այս հատվածում հեղինակը նկարագրում է նաև իր սերը գրականության համդեպ, գրական փորձերը, ապա հիասթափությունը, ապա սերը թատրոնի հանդեպ, երիտասարդական տարիներին բեմում տեսած դերասանների՝ Իսահակ Ալիսանյանի, Աբելյանի, Փափազյանի:

Ռ. Զարյանը որոշում է դերասան դառնալ. ընդունվում է Թբիլիսիի Չայրատան դրամատիկական ստուդիան, բայց շուտով դեպքերի ընթացքից հասկանում է, որ թատրոնը իր տեղը չէ: Սակայն հետագայում նա գրում է. «Նորից թատրոնի լույսերը վառվեցին ինձ համար: Նորից կուլիսներում եղա: Ու իմ կյանքի հասուն տարիներին շատ համեստ ուղեկիցը եղա հռչակված դերասանների: Եվ ուրախ եմ ինձ վիճակված բախտի համար»: Այո, կյանքը, թե՞ ճակատագիրը նրան տանում են այլ ճանապարհով, Ռուբեն Զարյանը դառնում է թատերական քննադատ և բավական դիպուկ արժույթի իր կողմը. «Թատերական քննադատը պահում է դերասանին ապագա սերունդների համար»:

Չուշագիրը բավական մանրամասն է անդրադարձել բոլոր ժամանակների իր ուսուցիչներին, ու դարձյալ ճշգրիտ եզրակացություն. «Ուսուցչի հանդեպ հարգանքի հանգելու համար ազգը պիտի երախտիքի ընթերցումն ու զգացումը մշակի դարերով»:

Բավական ինքնատիպ են հրաժեշտ Թիֆլիսին և Երևան վերադառնալու հատվածները. «Գնում եմ, բայց կգամ քեզ այցի, սիրելի՛ Թիֆլիս, կգամ հիշելու ոչ միայն իմ կյանքի քսան տարին, կգամ բերելու քեզ իմ երախտագետ սիրտը»:

Ապա անմիջապես վերադարձը հայրենիք. «Որտեղ, աշխարհի որ ծայրում էլ ծնված ու ապրած լինի հայ մարդը, եթե գալիս է հայրենիք, նա վերադառնում է... հայրենի երկիր է գալիս, տուն է վերադառնում, գալիս է իր նախնիների երկիրը, որ ժառանգաբար իրենց է նաև»:

Գիրքն արժևորվում է նաև հեղինակային եզրահանգումներով, ինչպես օրինակ. մի դերասանի մահվանից հետո մտածում է՝ ով է նրա տեղը բռնելու ու գրում է. «Ջակաջա, ոչ ոք ոչ ոքի տեղը չի բռնում: Մեկը գնում է, մյուսը գալիս է, սերունդները հաջորդում են իրար, բայց ամեն մի անհատականության վերապահված է փոքր թե մեծ տեղը, միայն իր տեղը»: «Չոբեյանը գուցե կարելի է կազմակերպել, թաղումը՝ երբեք: Մարդկանց թաղումն բերողը սրտի ծայն է, հոգու

պատկերը, այն բարձր գիտակցությունը, որ իրենք եկել են ուղեկցելու Շիրազին դեպի անմահություն»,- գրում է Շիրազի թաղման առիթով: Կամ՝ «Շիրազի պաշտամունքի կողքին կյանք առավ Սևակի պաշտամունքը: Պաշտամունքը խորացավ, երբ կարդացին «Մարդը ափի մեջ» գիրքը և հասկացան, որ ժողովածուն շարունակությունն է այն կետի, որտեղ կանգ էր առել Զարենցը»:

Այս երկհատորն ընդգրկում է նաև շատ բարդ ժամանակահատված, հակասական իրադարձություններով ու զաղափարախոսությամբ ծանրաբեռ մի շրջափուլ, երբ դաժան ու բարդ բարոյահոգեբանական պայմաններում ապրելու գործել են շատ մեծություններ՝ թե քաղաքական, թե՞ գրական, թե՞ թատերական աշխարհում: Եվ պատմության այս հատվածի մասին Զարյանի գրքում տեղ են գտել թե՛ նկարագրություններ, թե վերլուծություններ, թե՞ եզրահանգումներ, որոնք հիմնականում օբյեկտիվ գնահատման սահմաններում են: Տպավորիչ է 37 թվականի արձագանքը. «Մարդիկ ապրում էին բզկտված հոգով, ապրում էին խառն ու մթամած գլխով, տակնուվրա եղած սրտով»:

Գրքում մի առանձնակի տեղ ունեն Եղիշե Զարենցին նվիրված էջերը, որպես մեծաբուն, խոնարհում ժամանակի մեծագույն բանաստեղծին: Եվ բավական բնորոշ է, երբ Չայսեփորատի գեղարվեստական գրականության բաժնի պետի պաշտոնում աշխատելու ծանրագույն տարիների մասին հիշելիս, երբ իշխում էր սովետական ծայրահեղ բարոյախոսությունը, հեղինակը գրում է. «Ականջիս Զարենցի խրատն էր. մենք՝ ժամանակակիցներս, մեր անցյալի շարունակությունն ենք, օրինական ժառանգ այն բոլորի, ինչ որ ստեղծել է մեր ժողովուրդը խորենացուց և ավելի վաղնջական դարերից սկսած»:

Չեղիսնակն այս գրքում անդրադարձել է շատ ու շատ հայտնի մարդկանց, մշակույթի, գրականության, երաժշտության, կերպարվեստի անվանի դեմքերի, ընդ որում ոչ էպիգոնիկ, որովհետև նրանց հետ ոչ միայն պարզապես հանդիպումներ են եղել, այլ նաև որոշակի մտերմություն, բարեկամություն, ընկերություն: Եվ այս հատվածում տպավորիչ ու հիշարժան են հեղինակի գնահատականները կյանքի տարբեր տարիներին հանդիպած արվեստագետների ու գիտնականների մասին: Եվ եթե անգամ հիշատակենք միայն մի փոքր հատված այդ ցուցակից, արդեն կարելի է միայն ապշել ու հիանալ՝ Եղիշե Զարենց, Չովհանյան Չով-

հաննիսյան, Վահրամ Գայֆեջյան, Ռուբեն Դրամբյան, Թորոս Թորամանյան, Օլգա Գուլազյան, Արուս Արայան, Յուլիա Խանգադյան, Մկրտիչ Ջանան, Արա Սարգսյան, Ալազան, Գուրգեն Ջանիբեկյան, Նաիրի Զարյան, Վերա Զվյագինցևա, Չակոբ Կոջոյան, Սուրեն Քոչարյան, Չովհաննես Շիրազ և այլն...

Բնական է, որ Ռուբեն Զարյանն անդրադարձել է նաև Ակադեմիայի ստեղծման պատմությանը, այդ գործին նվիրված անհատներին, ինչպիսիք էին Չովսեփ Օրբելին, Չակոբ Մանանդյանը, Վիկտոր Չամբարձումյանը, Մանուկ Աբեղյանը, Զրաշյա Աճառյանը, Գրիգոր Ղափանցյանը, Արսեն Տերտերյանը... Միայն անուններից արդեն հոգիդ փառավորվում է:

Ռուբեն Զարյանի ինքնակենսագրական այս գործն իրականում դուրս է գալիս կենսագրության սահմաններից, դառնում հանրագիտարանային արժեք՝ իր հարուստ տեղեկատվությամբ: Եվ թերևս ամենաեականը. տարիների հեռավորությունից պատուհանն անցափ հետաքրքիր ու արժեքավոր է, առավել ևս, երբ հեղինակը հիմնականում օբյեկտիվ է իր գնահատականներով:

Գիրքը մի ամբողջ ժամանակահատված է, բավական մանրամասն ներկայացված վավերագրություն, հաճախ չսրբագրված ու հետաքրքիր դիտարկումներով, ծանոթ հետոներով, անձնական վերաբերմունքով ու գնահատականներով: Եվ վերջապես Ռուբեն Զարյանի «Մայրամուտից առաջ» (Ինքնապատում) գիրքը գալիս է լրացնելու վաստակաշատ արվեստագետի գիտական ժառանգությունը՝ ինքնատիպ ու յուրօրինակ ձեռագրով:

Ուզում են ավարտել Լևոն Դախլերդյանի բնութագրումով. Ռուբեն Զարյանի գործունեությունը բաժանելով երկու մասի՝ ուսումնասիրությունների, հեղինակած գրքերի ու հոդվածների, նաև որպես գիտության, արվեստագիտության, գրական-գեղարվեստական կյանքի կազմակերպչի, Դախլերդյանը գրում է. «Հիմա դուք որոշեցեք, Ռ. Զարյանի սեփական ստեղծագործական վաստակն է ավելի ծանրակշիռ, թե՞ գիտական-հասարակական-կազմակերպչական գործունեությանը արդյունքը: Դժնք կշեռքի երկու մասին: Ո՞րը կլինի ավելի ծանր: Ես որ չեմ կարող ասել, երկուսն էլ ծանր են ու ծանրակշիռ... Երկուսի մեջ էլ շռայլ ու շնորհալի, արգասավոր և արդարամիտ...»:

**Լիլիթ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների դոկտոր**

## ՄԵՐ ՆՃԱՆԱՎՈՐ ԿՐԹՕԶԱՆՆԵՐԸ

### ՆԵՐՍԻՅԱՆ ԴՊՐՈՅ - 200



XIX դարում Թիֆլիսն իր հայահոծ բնակչությամբ դարձել էր հայ մշակույթի կարևոր կենտրոն: Այստեղ կային բազմաթիվ հայկական դպրոցներ, տարբեր պարբերականներ, դրամատիկական և հրատարակչական ընկերություններ, բարեգործական ու հասարակական կազմակերպություններ: Անգնահատելի դեր խաղաց Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, որը մեկ դար անընդմեջ դարձավ հայ ուսուցիչների պատրաստման իսկական դարբնոց:

Դպրոցը պաշտոնապես բացվեց 1824 թ. հոկտեմբերի 1-ին: Ժամանակի հետ փոխվում էին պահանջները: Ուսումնական գործի զարգացումը, աշակերտության աճը հրատապ էին դարձնում նոր դպրոցական շինություն ունենալու անհրաժեշտությունը:

Բարերար Ալեքսանդր Մանթաշյանը հանձն է առնում հոգալ դպրոցական նոր շենքի կառուցման ծախսերը: 1910թ. սկզբներին նա դպրոցի շենքի շինարարության համար հատկացրեց 250.000 ռուբլի, որն այդ ժամանակների համար ահ-

ռելի գումար էր: Ալեքսանդր Մանթաշյանի մահից հետո, ի պատիվ նրա ժառանգների, կիսատ չի մնում նրա սկսած հայրենասիրական մեծ գործը: Նրա որդիներն ավելացնում են պահանջվող գումարը՝ հասցնելով 372.000 ռուբլու, որը բավարար էր ուսուցման ժամանակակից պահանջները բավարարող կառույց ունենալու համար: Արագ կառուցվում է եռահարկ, իր տեսքով հայ պատմաճարտարապետական կառույցները ինչեցնող մի գեղեցիկ շինություն: Մուտքի մոտ դրված էին դպրոցի հիմնադիր Ներսես Աշտարակեցու և բարերար Ալեքսանդր Մանթաշյանի կիսանդրիները: Երկրորդ և երրորդ հարկերը զբաղեցնում էին 25 դասասենյակները:

Դպրոցի պատմության մեջ Ներսես Աշտարակեցու անվան հետ մտավ նաև մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշյանի անունը, որը, իր միջոցները չխնայելով, շռայլորեն նվիրաբերեց ազգային կարևոր այս կրթօջախի բարգավաճման գործին:

Դպրոցի նշանավոր սաներից են եղել Ղազարոս Աղայանը, Պերճ Պռոշյանը, Չովհաննես Թումանյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Զայկ Բժշկյանցը, Սողոմոն Թեփիլյանը, Անաստաս Միկոյանը, Կարո Զալաբյանը և շատ ուրիշներ:

### ԳԼՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ - 150

Գևորգյան հոգևոր ճեմարանը (աստվածաբանական համալսարան) Զայաստանում հիմնված և մինչ օրս գործող ամենահին բարձրագույն ուսումնական հաստատությունն է: Այն գտնվում է Էջմիածնում, բացվել է 1874 թ. սեպտեմբերի 28-ին Գևորգ Դ կաթողիկոսի նախաձեռնությամբ և նրա անունով էլ կոչվել է: Ճեմարանի տնօրենը կաթողիկոսն էր, որը գործերը վարում էր ուսումնական խորհրդի և տեսուչի միջոցով: Դասավանդվող առարկաների թիվը հասնում էր 23-



ի, որոնցից կրոնական առարկաները 9-ն էին: Հետզհետե կրոնական առարկաները կրճատվում են՝ իրենց տեղը զիջելով հայոց լեզվին ու հայոց պատմությանը նվիրված առարկաներին:

Սաների թիվը հասնում էր 200-300-ի: Ուսանողները մանկավարժական պրակտիկա էին անցնում հատուկ հենակետային դպրոցում՝ վարժոցում կամ Վաղարշապատի ծխական դպրոցներում: Ճեմարանը պահվում էր հիմնականում Էջմիածնի վանքի եկամուտների և բարերարների նվիրատվությունների հաշվին:

Ճեմարանը անգնահատելի դեր է կատարել հայ մշակութային կյանքում: Այս կրթօջախում են դասախոսել Կոմիտասը, Մանուկ Աբեղյանը, Կարա-Մուրզան, Վարդգես Սուրենյանցը, Փարեգին Լևոնյանը, Ստեփան Լիսիցյանը, Չովհաննես Չովհաննիսյանը և ուրիշներ:

Ճեմարանում են սովորել գիտության և մշակույթի ակադմիկոս գործիչներ Նիկողայոս Ադունցը, Ավետիս Ահարոնյանը, Նիկոլ Աղբալյանը, Զրաշյա Աճառյանը, Ալսեյ Բակունցը, Մակար Եկմալյանը, Ավետիք Իսահակյանը, Լևոն Շանթը և շատ ուրիշներ:





## ԵԳԱՄԿ-ն ամփոփել է մրցույթների արդյունքները

«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» ամփոփել է «Ակադեմիական գրագրության և հաղորդակցության հմտությունների խորացմանն ուղղված ծրագրերի իրականացման նախագծերի

մրցույթի» արդյունքները:

Մրցույթի նպատակն է նպաստել գիտահետազոտողների ակադեմիական գրագրության հմտությունների և միջազգային գիտական համայնքների ու գիտնականների հետ հաղորդակցության կարողությունների զարգացմանը, որակյալ հետազոտական նախագծերի և գիտական աշխատանքների պատրաստմանը, գիտական թվային հարթակներում երիտասարդ գիտնականների ներկայացմանը, որակի բարձրացմանը:

Մրցույթի շահառու են ճանաչվել Գայանե Հովհաննիս-

յանը՝ «Դոկտրինա» միջմշակութային գիտալուսավորչական ՀԿ-ից, Ավետիք Հարությունյանը՝ «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» ՀԿ-ից և Սմբատ Հակոբյանը՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից:

\*\*\*

Ամփոփվել են նաև «Գիտնականների միջև հաղորդակցման խթանմանն ուղղված միջոցառումների իրականացման մրցույթի» արդյունքները: Մրցույթի նպատակն է նպաստել գիտնականների միջև կապերի և հաղորդակցման ընդլայնմանը, հաղորդակցման միջավայրի ստեղծմանը, միջգիտակարգային աշխատանքների քանակի մեծացմանը և գիտական համայնքի ամրապնդմանը:

Մրցույթի շահառու է ճանաչվել «Հզոր միտք երիտասարդական» ՀԿ-ից Ստելլա Ավետիսյանը:

## ՆԻԿՈԼ ՄԱՔԻԱՎԵԼԻ

Իտալացի նշանավոր փիլիսոփա, գրող, պատմաբան Նիկոլո Մաքիավելիի (1469-1527) ավելի քան 500 տարի առաջ արտահայտած խորիմաստ մտքերն այսօր էլ ունեն այնպիսի ակնհայտություն: Ստորև ներկայացնում ենք նրա փոխաբերական ասույթներից մեկը, որի հասցեատերը իշխանությունն ամեն կերպ իրենց ձեռքում պահել ցանկացող ապիկար իշխանավորներն են:

«Եթե քեզ թագավոր են ընտրել, իսկ թագը քեզ վրա մեծ է ստացվել, ապա նախ այն կրճատի քո աչքերին, ու դու կսկսես ոչինչ չտեսնել: Այնուհետև այն կրճատի քո ականջներին, և դու կսկսես ոչինչ չլսել: Հետո այն կահի քո շուրթերի վրա, և դու չես կարողանա որևէ խոսք անգամ ասել: Ի վերջո, այն կրճատի քո վզին՝ շղթայելով քեզ, որից հետո քո իսկ ստրուկները քեզ կտանեն կառավարան: Եվ դու կտեսնես ու կլսես ամեն ինչ և կփորձես խոսել, բայց ոչ ոք քեզ չի նայի, և ոչ ոք քեզ չի լսի»:



## ԹԵՎԱՎՈՐ ԴԱՐՁԱԾ ԱՐՏԱՆԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Հոմերական ծիծաղ

Այս արտահայտությունն օգտագործվում է անզուսպ, բարձր և անվերջանալի թրքից նշանակությամբ: Ծագել է Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսական» պոեմներում աստվածների ծիծաղի նկարագրությունից:

### Փոթորիկ մի բաժակ ջրում

Արտահայտությունն ունի «ամնշան առիթով մեծ հուզում» նշանակություն: Այն պատկանում է ֆրանսիացի քաղաքական գործիչ ու մտածող Մոնտեսքյոյին (1689-1755), որը, ըստ Բալզակի, այդպես արտահայտվել է Սան Մարինո զառանգ հանրապետության քաղաքական երկպառակությունների մասին:

### Բաբելոնյան աշտարակաշինություն

Հնագույն առասպելի համաձայն՝ Բաբելոնում փորձում են կառուցել մի աշտարակ, որը պետք է հասներ երկինք: Աստված գայրամուսն է, «խառնում նրանց լեզուները», կառուցողներն այլևս չեն հասկանում միմյանց և չեն կարողանում շարունակել աշտարակաշինությունը: Օգտագործվում է անկարգություն, աղմուկ, իրարանցում, խառնաշփոթություն նշանակությամբ:

### Ալֆա և օմեգա

Հունական այբուբենի առաջին և վերջին տառերի անուններն են: Նշանակում է **առաջինը և վերջինը**, ինչպես նաև **սկիզբ և վերջ**: Օգտագործվում է ամեն ինչը, բոլորը իմաստով:

### Ախորժակն ուտելիս է բացվում

Արտահայտությունը վերցված է ֆրանսիացի գրող Ֆրանսուա Ռաբլեի (1494-1553) «Գարգանտույա» (1532) վեպից: Իմաստն է՝ ցանկությունների կատարումը նոր ցանկություն է առաջացնում:

### Առյուծի բաժին

Նշանակում է ամենամեծ և ամենաընտիր բաժինը, որ իրեն է վերցնում ուժեղը: Արտահայտությունը գալիս է եգոպոսի «Առյուծը, աղվեսը և էջը» առակից: Միտքն օգտագործել են Լաֆոնտենը, Այգեկցին:

### Արջի ծառայություն

Առաջացել է Ա. Ի. Կոչիլովի «Ճգնվորն ու արջը» առակից (1808): Նշանակում է ծառայություն, որ օգուտի փոխարեն վնաս է պատճառում:

### Բարդուղիմեոսյան գիշեր

1572թ. օգոստոսի 24-ի գիշերը կաթոլիկ եկեղեցու հրամանով սուրբ Բարդուղիմեոսի

տոնակատարության օրը Փարիզում կաթոլիկները կոտորեցին հուգենոտներին (բողոքականներին): Փոխաբերական իմաստով նշանակում է մասսայական ոչնչացում, արյունոտ ջարդ, սպանդ, կոտորած:

### Գառան մորթով գայլ

Բնութագրվում է երկերեսանիությունը, ինչպես նաև չար մտքերը բարեգործի դիմակով թողարկելը: Առաջացել է Ավետարանից. «Ձգույշ կացեք սուտ մարգարեներից, որ ձեզ մոտ կգան ոչխարի հանդերձներով, իսկ ներքուստ հափշտակող գայլեր են»:

### Գեղեցիկ աչքերի համար

Մոլիերի արտահայտությունն է «Սեթևեթուհին» (1660) կատակերգությունից: Օգտագործվում է, երբ մեկի նկատմամբ ցուցաբերվում է ուշադրություն ոչ թե ըստ նրա արժանիքների, այլ նրա հետ ունեցած մտերմական կապերի համար:

### Դամոկլյան սուր

Ըստ ավանդության՝ Դամոկլեսը Սիրակուզայի բռնակալ Դիոնիսիոսին (432-367 մ.թ.ա.) համարում էր ամենաբախտավոր մարդկանց մեջ: Սակայն նա ցանկանալով ցույց տալ, որ դիրքն ու երջանկությունը միշտ վտանգի մեջ են, Դիոնիսիոսին նստեցնում է գահի վրա, իսկ նրա գլխի վերևում ձիու մագոլ կախում է սուրը: Արտահայտությունը բնորոշում է վտանգ, որ ամեն րոպե կարող է պայթել մարդու գլխին:

### Եկա, տեսա, հաղթեցի

Հուլիոս Կեսարի խոսքերն են՝ վենի, վիդի, վիցի: Երբ մ.թ.ա. 47թ. Կեսարը մտնում է Հռոմ, այդ բառերն է արտասանում: Արագությամբ լուծել որևէ խնդիր, հասնել հաջողության, այս է արտահայտության իմաստը:

### Դրակոնյան օրենքներ

Փոխաբերական իմաստով դաժան, անտանելի օրենքներ: Աթենքում մ.թ.ա. 7-րդ դարում օրենսդիր Դրակոնը մշակում է նոր օրենքներ, որոնք չեն համարժեքի համար նախատեսում էին մահապատիժ: Ըստ Պլուտարքոսի՝ այդ «օրենքները գրվել են արյունով»:

### Ես գիտեմ այն, որ ոչինչ չգիտեմ

Հույն փիլիսոփա Սոկրատեսի (469-399 մ.թ.ա.) սիրած խոսքերն են, որը նա հաճախ է կրկնել: Հասցեագրվում են համեստությունից զուրկ մեծամիտ մարդկանց:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ կենտրոնի հետևյալ լաբորատորիաների վարիչների և խմբերի ղեկավարների թափուր տեղերի համար

1. Սիրտ-անոթային համակարգի գործունեությունը կարգավորող նյութերի դիզայն և սինթեզի լաբորատորիա
2. Հակաքաղցկեղային միացությունների սինթեզի լաբորատորիա
3. Ամինաթթուների և պեպտիդների կենսաբանորեն ակտիվ ածանցյալների սինթեզի ու հատկությունների ուսումնասիրման լաբորատորիա
4. Հոգեմետ միացությունների սինթեզի լաբորատորիա
5. Հակաբիոտիկների սինթեզի լաբորատորիա
6. Սպիրոհետերոցիկլիկ միացությունների սինթեզի լաբորատորիա
7. Թունաբանության և քիմիաթերապիայի լաբորատորիա
8. Դեղաբանության և պատոհիստոլոգիայի լաբորատորիա
9. Ամինամիացությունների լաբորատորիա
10. Անոկան չհագեցած միացությունների լաբորատորիա
11. Ազոտային հետերոցիկլների լաբորատորիա
12. Կիրառական քիմիայի պրոբլեմների լաբորատորիա
13. ՄՄՌ մագնիսա-ռեզոնանսային սպեկտրոսկոպիայի լաբորատորիա
14. Ազոմեթինների խումբ
15. Պոլիմերային դիսպերսիաների խումբ
16. Ռենտգեն հետազոտությունների և մասս. սպեկտրոսկոպիայի խումբ

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման՝ մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

- 1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան (կամ մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) որակավորում՝ խմբի ղեկավարի դեպքում),
- 2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ (խմբի ղեկավարի դեպքում չի պահանջվում),
- 3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) համահեղինակել է բնական գիտությունների մասնագիտություններով՝ առնվազն վեց հրապարակում ՄԳՀ-ում (խմբի ղեկավարի դեպքում չորս հրապարակում),
- 4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների մասնագիտություններով՝ առնվազն չորսում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ (խմբի ղեկավարի դեպքում չի պահանջվում):

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) դիմում՝ ուղղված ինստիտուտի տնօրենին,
- բ) ինքնակենսագրություն,
- գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ՝ լրացված,
- դ) լուսանկար (2 հատ),
- ե) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,
- զ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- է) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հավաստող փաստաթղթերի պատճենները,

ը) հրատարակված գիտական աշխատանքների ցանկը,

թ) բնութագիր վերջին աշխատավայրից,

ժ) տեղեկանք մշտական բնակության վայրից:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Ազատության 26, ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն (գիտական քարտուղարին), հեռ. +374 10-28-52-91:

**ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն**

## Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ  
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 25.12.2024 թ.:

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: